

ԱՂԲՅՈՒՐԱԳԻՏԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ «ՏՈՆԱՊԱՏՃԱՌ» ԺՈՂՈՎԱԾՈՒԻ ՈՐՈՇ ՄԻԱՎՈՐՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ՝

Աննա ՕՆԱՆՋԱՆՅԱՆ

Տոնապարծառ ժողովածուները, որոնք գլխավորապես ընդգրկում են եկեղեցական տոների, սրբերի հիշատակության կամ պահոց օրերի վերաբերյալ պատճառներ, լուծմունք-մեկնություններ և բացատրություններ, եկեղեցական մատենագրության ինքնատիպ միավորներ են, որոնց համարժեքը հնարավոր չէ գտնել այլ եկեղեցական մատենագրության մեջ: Տոնապարծառները մեզ են ներկայանում որպես յուրօրինակ խճանկար թե՛ բազմազան և բազմաժանր նյութերի ընդգրկմամբ, թե՛ տեքստի կառուցվածքային հիերարխիայով: Դրանք պարունակում են տարբեր հեղինակների կողմից գրված այլազան նյութեր՝ դավանաբանական, վարքագրական, վկայաբանական, մեկնողական, հայրաբանական, ինչպես նաև ամփոփում են դրվագներ եկեղեցու պատմությունից, ավանդական ժողովրդական և վանական բանահյուսությունից, երբեմն օրհներգեր և աղոթքներ, այդ թվում և ալոգիզմներ Եփրեմ Ասորու, Հովհան Ոսկեբերանի, Գրիգոր Նազիանզացու և այլ ընդհանրական հայրերի երկերից:

Մեզանում Տոնապարծառ ժողովածուների ուսումնասիրությանն առավել ամբողջական ձևով անդրադարձել են Փ. Անթաբյանն² ու Ռ. Վարդանյանը³: Հայ մատենագրության մեջ Տոնապարծառ ժողովածուները հաճախ են շփոթվել Տոնամակ կամ Տոնանամակ, երբեմն էլ Յայսմաուրք ժողովածուների հետ: Փ. Անթաբյանն առաջինն է, որ առանձնացնում է Տոնապարծառ ժողովածուները Տոնամակ-Տոնանամակից, Տոնացույց-Տոնացուցակից, Տոնական-Ճաղնարիից, ինչպես և Ճաշոց և Յայսմաուրք ժողովածուներից, որոնց մի մասն ունի եկեղեցածիսական ամենօրյա գործնական կիրառություն, մյուսը՝ ոչ⁴: Բացի այդ, Ճաշոցը կամ Տոնամակ-Տոնանամակը, Յայսմաուրքը և Տոնացույցը կամ Տոնացուցակը ունեն օրացուցային կանոնավոր բաժանում, իսկ մյուս բոլոր ժողովածուները՝ ոչ:

¹ Սույն հոդվածը տպագրվում է 13-6D381 ծածկագիրը կրող «Դրվագներ հայ աստվածաբանական մտքի պատմությունից» թեմայի շրջանակներում:

² Տե՛ս Անթաբյան Փ., Տոնապատճառ ժողովածուները, Բանբեր Մատենադարանի, № 10, էջ 103-127:

³ Վարդանյան Ռ., Հայոց տոնացույցը, Եր., 1999, էջ 214-226:

⁴ Անթաբյան Փ., նշվ. աշխ., էջ 105:

Տոնապատճառներն, ըստ Փ. Անթաբյանի, նման են ճատրնափրններին, սակայն ճատրնափրններն ավելի ազատ են ընդգրկվող նյութի թեմատիկայի առումով մինչդեռ Տոնապատճառները, որոնք տեսական բնույթի և նշանակության ժողովածուներ են ու օգտագործվել են վանական դպրոցներում ուսուցողական նպատակներով¹, գլխավորապես ներառում են այս կամ այն եկեղեցական տոնի պատճառն ու ընթերցվածների մեկնություն-վերլուծությունը:

Տոնապատճառ ժողովածուները հայտնի են տարբեր անուններով՝ դրանք կոչվել են «տանից պատճառ և ընթերցուածոց մեկնություն» (ՄՄ 3795), «բացառյալատություն տանից» (ՄՄ ձեռ. 1888), «վերլուծություն ընթերցուածոց հանդերձ այլոց» (ՄՄ ձեռ. 1204), «պատճառ նամակա տանից» (ՄՄ ձեռ. 3082) և այլն²:

Տոնապատճառ ժողովածուների առաջացման հարցը քննելիս Փ. Անթաբյանը հենվում է ՄՄ ձեռ. 1007 Տոնապատճառի (11-12-րդ դդ. ընդօրինակություն) հիշատակարանի վրա³, համաձայն որի Տանապատճառը կամ Մեկնություն ընթերցուածոցը շարադրվել է Հակոբոս Տեառնեղբոր և Կյուրեղ Երուսաղեմացու կողմից, և առաջին անգամ Հայոց աշխարհ է բերվել Արիստակես Հայրապետի ձեռքով (4-րդ դ.), ինչն ըստ Փ. Անթաբյանի թեև հավանական չէ, այնուամենայնիվ մատնացույց է անում Տոնապատճառի հնությունը⁴: Ռ. Վարդանյանը, սակայն, հիմնավորում է, որ 1007 ձեռագրի հիշատակարանում խոսքը ոչ թե «Մեկնություն ընթերցուածոց»-ի, այլ «Կանոնք ընթերցուածոց»-ի կամ Տոնացույցի մասին է⁵: Նրա պնդմամբ Տոնապատճառ ժողովածուների նախօրինակն է Գրիգոր Արշարունու «Մեկնություն ընթերցուածոց»-ը⁶, որն Արշարունի նի քորեպիսկոպոսը շարադրել է Կյուրեղ Երուսաղեմացու «Յաղագս երախայից» երկի կառուցվածքային նմանությամբ և 34 համապատասխան գլուխներում մեկնել է տերունական տոները՝ իրենց ընթերցվածներով հանդերձ⁷:

¹ Նույն տեղում, էջ 118:

² Վարդանյան Ռ., նշվ. աշխ., էջ 216:

³ Տե՛ս ՄՄ ձեռ. 1007, թ. 466բ-467ա: Հիշատակարանի գրիչը նշում է, որ այդ կանոնները պահպանվել են Յակոբ Երուսաղեմացու միջոցով, ապա Անտոն անապատականի ձեռքով բերվել են «ի մեծ ժողովն և ընկալեալ», այսինքն՝ Նիկեայի ժողովում հաստատվել են, և Կյուրեղ Երուսաղեմացու կողմից լրացվել: Իսկ «ի մերս բերաւ աշխարհի ի սրբոյն Ռատակիս: Բերաւ յետո և կարգեալն ի Կուրղէ: Արդ՝ զոցա բանքս առեալ սրբո հայրապետին մերո Ջաքարիայի և այլ սրբոց վարդապետաց լուսաւորեցին զամենայն հաւատացեալս ի Քրիստոս: Եւ ցուցին մեզ զտանսս և զպատճառսս նոցա» (թ. 466բ):

⁴ Տե՛ս Փ. Անթաբյան, նշվ. աշխ., էջ 118:

⁵ Վարդանյան Ռ., նշվ. աշխ., էջ 215:

⁶ Տե՛ս Վարդանյան Ռ., նշվ. աշխ., էջ 214:

⁷ Տե՛ս Գրիգորիսի Արշարունու քորեպիսկոպոսի Մեկնություն ընթերցուածոց (այսուհետև՝ Գրիգորիսի Արշարունի), ներած. Ք. Չրաքյանի, Վենետիկ, 1964:

Գրիգոր Արշարունու երկի հրատարակիչ Ք. Չրաքյանը «ընթերցվածոց մեկնություն»-ները խմբավորում է երեք տեսակների՝ ա) սուրբ գրքի ընթերցվածների բացատրություն, թե ինչ պատճառով են կատարվում մարգարեական և առաքելական գրքերից հատվածները կոնկրետ տոնի կամ հատուկ օրերի շրջանի ընթացքում՝ դրան հավելելով խորհրդական մեկնություններ, բ) ընթերցվածի խոսքերի բացատրություն, որ ավելի հարմար է կոչել սուրբգրային մեկնություններ, գ) ընթերցվածի բառերի և խորհրդի բացատրություն, որն առաջին երկուսի մեկտեղումն է¹: Ք. Չրաքյանը գրում է, թե «այս երեք տեսակները երբեմն *Տոնապարձառ* և *Տոնամանկ* ևս անոանոած են», թեև այսօր արդեն հստակ է, որ *Տոնամանկ* ու *Տոնապարձառը* տարբեր ժողովածուներ են և *Տոնապարձառ* ժողովածուն իր բովանդակությամբ առավել համապատասխանում է երրորդ տեսակին:

Մեր համոզմամբ, *Տոնապարձառ* ժողովածուն ոչ միայն տոնածիսական կամ *էկզեգեսիկ* բնույթի երկ է, այլ նաև հակաճառաբանական, ինչի վկայությունն է այն հանգամանքը, որ *Տոնապարձառները*, ի տարբերություն վերոնշյալ բոլոր այլ ժողովածուների, սկսվում են դեկտեմբերի 25-ով՝ Դավթի և Հակոբի տոնի մեկնաբանությամբ: Սրանով մատնանշվում է, որ Հայ եկեղեցում դեկտեմբերի 25-ը չի կապվում Քրիստոսի Ծննդյան հետ, ինչը բնորոշ էր բոլոր երկաբնակ եկեղեցիներին:

Տոնապարձառների խմբագրությունները 7-8-րդ դդ. մինչև 13-րդ դարն ընկած ժամանակահատվածում արդեն հայտնի են: Գրիգոր Արշարունու կազմած «Մեկնությունն ընթերծուածոց»-ի հետագա խմբագրությունների հեղինակներ են Զաքարիա Զագեցին, Արիստակես Լաստիվերցին, Սամվել Կամրջաձորեցին, Վարդան Հաղպատեցին, Հովհաննես Գանձակեցին և Վարդան Արևելցին:

Թեև Զաքարիա Զագեցին է Արշարունու կազմած ժողովածուի հաջորդ խմբագիրը, և այդ մասին էլ վկայվում է 1007 ձեռագրի հիշատակարանում, մատենագիտական տեղեկանքներում Սամվել Կամրջաձորեցու անունն է, որ հաճախ նշվում է որպես *Տոնապարձառի* ստեղծողի անուն՝ «զՏոնապատճառն՝ [արար] Կամրջաձորոյ հայրն Սամուէլ»², չնայած որ վերջինս միայն խմբագիրներից մեկն է:

Բանն այն է, որ Սամվել Կամրջաձորեցու կազմած ժողովածուի միավորները խիստ տարբերվում են Գրիգոր Արշարունու կազմած տարբերակի միավորներ-

¹ Գրիգորիս Արշարունի, նշվ. աշխ., էջ 52:

² Անասյան Հ., Հայկական մատենագիտություն, Ե-ԺԸ դարեր, Ներածություն, հտ. Ա, Եր., 1959, էջ LX:

րից, շատ ավելի ծավալուն են՝ զանազան ընդհանրական հայերի և հայ մատենագիրների երկերից ծաղկաքաղով և առանձին հեղինակային ճառերի ներմուծմամբ: Այս առումով Սամվել Կամրջաձորեցին իսկապես «հորինել» է **Տոնապարճառ** ժողովածուներն այն բովանդակությամբ, որով վերջիններս լայն կիրառություն են գտել միջնադարյան Հայաստանում: Այնուամենայնիվ, նա **Տոնապարճառի** իր խմբագրության մեջ է ներառել նախորդ խմբագիրներ Զաքարիա կաթողիկոսի յոթ ճառերը, ինչպես նաև Արիստակես Լաստիվերցու հեղինակած Ծննդյան և Մկրտության ութ օրերի (Փարիզի ազգային գրադարանի 303 թվակիր ձեռագիրը, որը ժամանակին 179 ձեռագրի հետ եղել է մեկ ամբողջություն)¹ մեկնությունների տարբերակները՝ դրանք դնելով իր հեղինակած «Սամուէլի և Պաղոսի և այլոց վարդապետացն վերլուծութիւն ընթերցածոց» գրվածքից առաջ²: Իր հեղինակային ճառերից Սամվել Կամրջաձորեցին **Տոնապարճառի** նոր խմբագրության մեջ է ներմուծել արդեն նշված «Սամուէլի և Պաղոսի ասացեալ», «Յաղագս տօնից տերունականաց», «Յաղագս առաջին աւուրն», «Յաղագս քառասնօրեայ ի տաճարն ընծայելոյն», «Յաղագս Առաջաւոր պահոցն»³, «Յաղագս քառասնեկի պահոցն» միավորները⁴: Սամվել Կամրջաձորեցու խմբագրությանը պատկանող ձեռագրերի ուշ շրջանի ընդօրինակություններից կարելի է նշել ՄՄ ձեռ. 1007, 2039, 2040, 2042 ձեռագրերը: Զագեցի-Լաստիվերցի-Կամրջաձորեցի խմբագրությունների ձեռագրերը կարելի է խմբավորել մեկ ձեռագրախմբի մեջ (պայմանականորեն կոչենք Ա ձեռագրախումբ):

¹ Տե՛ս Վարդանյան Ռ., նշվ. աշխ., էջ 219:

² Լաստիվերցու խմբագրած Տաւնապատճառի մասին մանրամասն տես, Մանուկյան Գ., Լաստիվերցոյն՝ Մեկնութիւն ընթերցուածոց, «Էջմիածին», Ե., 1969, էջ 36-43: Իր այս հոդվածում Գ. Մանուկյանը բերում է որոշ ձեռագրեր, որտեղ Արիստակես Լաստիվերցու մեկնությունները զետեղված են «Պատճառ աւուրք» խորագրի տակ, սակայն չի որոշում քաղող հեղինակին: Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ այդ հեղինակը Սամուէլ Կամրջաձորեցին է: Լաստիվերցու Մեկնութիւն ընթերցուածոցի հրատարակված բնագիրը տե՛ս Լաստիվերցոյն Մեկնութիւն ընթերցուածոց, աշխ. Գ. Տեր-Վարդանյանի, Մատենագիրք հայոց, ԺԱ դար, հտ. ԺԶ, Եր., 2012, էջ 634-642:

³ Այս ճառը երկար ժամանակ վերագրվել է Հովհաննես Վանականին, սակայն այն Սամվել Կամրջաձորեցունն է: Այս մասին տե՛ս Renoux Ch., Samuel Kamrjajorec'i, le traite sur l'Arjawor (Iere partie), Forum Byzantinum to IranL In Honour of Nina Garsoïan, Atlanta, 1996, pp. 379-396: Տե՛ս Օգանձախյան Ա., О труде "Причина поста Арачавор", Армянский Гуманитарный Вестник, т. 4, 2012, сс. 183-203.

⁴ Տե՛ս Վարդանյան Ռ., նշվ. աշխ., էջ 220:

Հաջորդ խմբագրությունը Վարդան Հաղպատեցունն է, որը վերջինս կազմել և հաստատել է տվել Ներսես Շնորհալի կաթողիկոսին¹: Սույն խմբագրության մեջ տեղ են գտել Ներսես Շնորհալի-Վարդան Հաղպատեցի հեղինակների գրչին պատկանող մի քանի ճառեր, ինչպես օրինակ, Գրիգոր Նազիանզացու «Ի ծնունդն Քրիստոսի» ճառի լուծմունքի մի հատվածի ընդարձակված տարբերակը²: Ավելին, Վարդան Հաղպատեցին սույն խմբագրության մեջ ընդգրկել է նաև Ներսես Շնորհալու Մատթեոսի Ավետարանի մեկնությունից որոշ հատվածներ, այդ թվում և խորանների մեկնությունը վերաբերող դրվագը՝ առանձին խորագրով:

Վարդան Հաղպատեցու **Տոնապարձառի** խմբագրությունը նոր էջ է բացում տոնապատճառների պատմության մեջ՝ ընդգծելով **Տոնապարձառի** հակաճառաբանական գործառույթը, ինչը հասկանալի է դառնում, երբ դիտարկում ենք խնդիրը ժամանակի պատմա-քաղաքական կոնտեքստում: Սույն խմբագրության մանրակրկիտ ուսումնասիրությունը վեր է հանում Հաղպատեցու և Շնորհալու իրական գրդապատճառները, այն է՝ **Տոնապարձառի** նոր խմբագրությանը հաղորդել հակաճառական, նաև՝ ջատագովական, նրբերանգ՝ ընդդեմ բյուզանդական երկաբնակ եկեղեցու առաջադրած մեղադրանքների: Այդ պատճառով էլ Հաղպատեցու ձեռնարկած **Տոնապարձառի** նոր խմբագրությունը բավականին տարբեր է Սամվել Կամրջաձորեցու կազմած **Տոնապարձառից**, միավորների տեքստը հիմնավոր կերպով խմբագրված և լրամշակված է բազմաթիվ հեղինակային մեկնությունների ու բացատրությունների կիրառմամբ: Վարդան Հաղպատեցու խմբագրության ուշ ընդօրինակություններից են ՄՄ 2021, 2195, 644 ձեռագրերը:

Վարդան Հաղպատեցու խմբագրությունը հիշարժան է նաև մեկ այլ պատճառով. **Տոնապարձառի** հետագա խմբագրություններն արվել են հենց այս խմբագրության հիմքի վրա: Այսպես, հաջորդ երկու խմբագիրները՝ Հովհաննես

¹ ՄՄ ձեռ. 1897 ձեռագրի գրիչներից Խաչատուրը, ով ըստ Փ. Անթաթյանի, եղել է Վարդան Հաղպատեցու աշակերտներից մեկը գրում է «վարդապետն իմ Վարդան եցոյց ինձ գրեալ [Նյուսացու ճառերի պատճառները – *հեղ. ծան.*] յիւրում Տանապատճառին զոր ինք իսկ հաստատեալ էր ի տէր Ներսիսէ հայոց կաթողիկոսէ», տե՛ս ՄՄ 1897, թ. 108ա: Նաև **Անթաթյան Փ.**, Վարդան Արևելցի, հտ. Ա, Եր., 1987, էջ 238, նաև, **Վարդանյան Ռ.**, նշվ. աշխ., էջ 222:

² Հարցի մանրամասների պարզաբանմամբ հանդես ենք գալու առանձին հոդվածով՝ *հեղ. ծան.*:

Գանձակեցին, Վարդան Արևելցին և Հովհաննես Երզնկացին¹ նոր խմբագրությունների համար հիմք են ընդունել Վարդան Հաղպատեցու խմբագրությունը:

Փ. Անթաբյանը, քննելով ՄՄ ձեռ. 4139-ը, իրավացիորեն վերագրել է այն Վարդան Արևելցու խմբագրությանը, նույն կարծիքին է նաև Ռ. Վարդանյանը²: Վարդան Արևելցին, սակայն, հիմնվելով Հաղպատեցու խմբագրության վրա, միևնույն ժամանակ հարստացրել է այն իր և այլ մատենագիրների գրչին պատակնող պատճառ-միավորներով: Այսպես, նոր խմբագրությունը համարվել է Հովհաննես Մկրտչին նվիրված հեղինակային ներբողով, Դավիթ Անհաղթի «Ներբողեան Խաչին Աստուածընկալ»-ի լուծմունքով³, ինչպես նաև Վարդան Հաղպատեցու և Դավիթ Քոբայրեցու հեղինակած **պարձառններից** մի քանիսով:

Ինչ վերաբերում է Հովհաննես Գանձակեցու կազմած **Տոնապարձառի** խմբագրությանը, ապա նրա հեղինակ լինելու վերաբերյալ ունենք հետևյալ տեղեկությունը. «Յոհաննէս Գանձակեցին, այր սրբամիտ և տօնասէր: Արար զՄեկնութիւն ընթերցուածոցն, որ ասի Տոնապատճառ»⁴:

Գանձակեցու խմբագրության մեջ կան տեքստային տարբերություններ և կարևոր հավելումներ, օրինակ՝ «Քրիստոս ծնեալի» լուծմունքը հարստացվում է մեկնողական նոր տարրերով, կամ «Յաղագս Յայտնութեան ճրագալուցի» միավորը համարվում է Սարգիս Կունդի Ղուկասի Ավետարանի մեկնության ծավալուն հատվածների ընդգրկմամբ: Այս խմբագրության թերևս առավել գնահատելի հավելումներից են «Յաղագս Յայտնութեան ճրագալուցի» միավորի վերջում արված կանոնների հավելումները՝ Կինտիանոսի Կուրդիանու (?) եպիսկոպոսի կանոնը, Հիպոդիտայ կանոնը⁵, Անդրեասի երրորդ կանոնը⁶ և, որ

¹ Վենետիկի ձեռ. 21-ը (ԺԴ դ.) Հովհաննես Երզնկացու Տոնապատճառի նոր խմբագրությունն է պարունակում, որի մեջ Երզնկացին, պահելով Արևելցու որոշ ճառեր, ավելացրել է իր 9 ճառերը, 3 ճառ Ներսես Լամբրոնացուց և մեկ ճառ Վահրամ Ռաբունուց: Յիշատակարան, թ. 552ա, Շնորհիւ ողորմութեանն Աստուծոյ, կարաւտս և սուրբ հարց եւ եղբարց եւ յամենայն եկեղեցոյ մանկանց աղաւթից խնդրողս, նուաստ Յոհանէս Եզնկայեցի, բազում ժամանակս ի յոլով արինակաց հաւաքեցի զգիրքս զայս, որ է պատճառ տանից տէրունականաց. նախ յերիս գիրս հաւաքեցի, եւ ապա յերիցն ետու գրել և ի միսս յայս ժողովեցի եւ արանդեցի զսա եկեղեցոյ մանկանց յազատութիւն եւ ի լուսաւորութիւն: Արդ, որք ընթերցմամբ շահիք կամ որք գաղափար առեալ գրէք, գրեսցիք եւ զայս բան յիշատակի ի վարձ վաստակոցն մեր, զի եւ զմեզ յիշելով խնդրեն ողորմութիւն յամենառատ ողորմութեանց տուողէն Յիսուսէ Քրիստոսէ յուսոյն մերոյ:

² Վարդանյան Ռ., նշվ. աշխ., էջ 223:

³ Մելքոնյան Ա., Դավիթ Անհաղթի՝ խաչին նվիրված ներբողի մեկնությունը «Տոնապատճառ» ժողովածուում, «Էջմիածին», ԺԱ, 2013, էջ 84-90:

⁴ Անասյան Հ., նշվ. աշխ., էջ XLVII:

⁵ Տե՛ս Հիպոդիտայ սրբոյ բան՝ ի Ծնունդն և ի Մկրտութիւնն Տեառն, Գլուխ Ա, Կանոնագիրք Հայոց, աշխ. Վ. Հակոբյանի, Բ հտ., Եր., 1971, էջ 282-283:

⁶ Աղայան Է., Ակնարկներ հայոց տոմարների պատմության, Եր., 1986, էջ 145:

ամենից կարևորն է, Եփրեմ Խուրի Ասորու անունով հայտնի հայատառ ասորերեն ալոգիզմը Քրիստոսի ծննդի մասին և դրա հայերեն թարգմանությունը, որին առաջին անգամ ուշագրություն է դարձրել Նիկողայոս Մառը¹:

Առաջին հայացքից թվում է, թե Հովհաննես Գանձակեցին իր խմբագրության համար հիմք է ընդունել Վարդան Հաղպատեցու խմբագրությունը՝ առանց լուրջ կառուցվածքային փոփոխություններ անելու: Սակայն մեր օգտագործած ձեռագրերից մեկը՝ ՄՄ ձեռ. 5561-ը՝ գրված 12-րդ դ., որը միավորների բովանդակության առումով շատ մոտ է 13-րդ դ. շարադրված Հովհաննես Գանձակեցու խմբագրությանը պատկանող *Տոնապարձառններին*, հիմք է տալիս ենթադրելու, որ կամ Վարդան Հաղպատեցու և Հովհաննես Գանձակեցու խմբագրությունների միջև եղել է մեկ այլ խմբագրություն, որից օգտվել է Գանձակեցին, կամ էլ մեկ դար առաջ ապրած մի անհայտ հեղինակի տեքստային հավելումները անցել են Հովհաննես Գանձակեցու խմբագրության մեջ: Գանձակեցու խմբագրության ձեռագրերից կարելի է հիշել ՄՄ ձեռ. 2041, 2771, 5443, 5561:

Հաղպատեցի-Արևելցի-Գանձակեցի խմբագրությունների ձեռագրերը կարելի է խմբավորել մեկ այլ ձեռագրախմբի մեջ (պայմանականորեն կոչենք Բ ձեռագրախումբ):

* * *

Այժմ Հաղպատեցի-Արևելցի-Գանձակեցի խմբագրությունների ձեռագրերի հիման վրա քննության առնենք *Տոնապարձառնի* առաջին մի քանի ճառերի աղբյուրները²: Չենք թվարկի ճառերում օգտագործված բոլոր աղբյուրները ամենայն մանրամասնությամբ, պարզապես մեկ-երկու նշում կանենք յուրաքանչյուր ճառի որոշ աղբյուրների շուրջ:

Գրեթե բոլոր ճառերում կան զուգահեռներ հայսմավուրքային նյութերի հետ: Դրանք ավելի մոտ են *Յայամաուրքի* Գրիգոր Վկայասերի խմբագրության հիմքի վրա կազմված *Տեր Իսրայելի խմբագրության տեքստին*, երբեմն էլ պատահում են զուգորդումներ *Կիրակոս Գանձակեցու Յայամաուրքի խմբագրության տեքստերի* հետ:

Բոլոր *Տոնապարձառն* ժողովածուների առաջին միավորը դեկտեմբերի 25-ով սկսվող «Ի փանի Դաթի մարգարէի և Յակովբու՝ եղբարն Տեան»³

¹ Март Н., Тексты и расыскания по армяно-грузинской филологии, Ефрем Сирин, О днях празднования рождества, кн. 1, СПб., 1900, стр. 23-25.

² Սույն ճառերի համեմատական բնագրերը կազմվել են մեր կողմից և պատրաստ են հրատարակության – հեղ. ծան.:

Տեառն»¹ պատճառն ու մեկնությունն է, որը Հաղպատեցի-Արևելցի-Գանձակեկեցի խմբագրություններում չունի հեղինակային տեղեկանք: Բ խմբի ձեռագրերում այն զուգահեռներ ունի հայսմաուրքային, վարքագրական նյութի հետ, ինչն էլ հստակ երևում է ներքոբերյալ համեմատականից:

**Յայսմաուրք: Տէր Իսրայէլի
խմբագրութիւն (Cod. Ven. 631)**

Բայց զի բազում գայլք պատանողք յարեան ի վերայ եկեղեցոյ մորթովք ոչխարաց, յորոց մի էր պեղծն և ժանտն Արտեմոն, որ իշխեաց եղծանել զԳիրս սուրբս և զտանս կարգեալս յառաքելոցն փոխեալ... և վարդապետք սուրբ եկեղեցոյ ընդդէմ զինեալ չար ախոյանին սատանայի...: Վասն այնորիկ կարգեցան տանս Է արանց գլխատորաց ի Դ աուրս խորհրդաբար... նախքան Ծնընդեան և Յայտնութեան Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, թեպէտ սկիզբն և զլուխ ամենայն տանից է ար Ծնընդեան և Յայտնութեան Քրիստոսի²:

Այս պատճառի մեկ այլ աղբյուր է Ստեփանոս Սյունեցու «Յաղագս Դավթի և Յակոբու տանին» ճառը, որի հետ տեքստային նմանություններն ակնհայտ են:

**Ստեփանոսի Սիւնեցոյ յաղագս
Դաւթի և Յակոբու³**

Ջոր արիւնակ, յորժամ շինուածք ոք կամիցի առնել զհիմն ի վերա հաստատուն վիմի դնէ, զի

**Տաւնապարճառ Բ ձեռագրախումբ
Ի քրանի Դաւթի մարգարէի և Յակովբու եղբարն Տեառն**

Սկիզբն տանից և հոգևոր ուրախութեանց ամենայն հաւատացելոց է տան Ծնընդեան և Յայտնութեան Տեառն զոր սկզբնաչարն կամեցաւ խանգարել՝ զէն գտեալ իւր զանիծեալն Արտեմոն և զամենայն հերձուածողսն: Ջոր իմացեալ վարդապետք եկեղեցոյ Հոգւովն Սրբով կարգեցին նախքան զԾնունդն զյիշատակ մեծին Դաւթի և զսրբոց առաքելոցն և ամրացուցին որպէս զինու և անմարտընչելի պարսպաւ:

... յորում և Բեկտոր կալաւ զաթոռն Հռոմայ, որ էր ԳԺ: (13)երորդ եպիսկոպոս ի Պետրոսէ, որ զԹեոդորոս մերժեաց՝ զնախնի աղանդոյն Արտեմոնի, որ համարձակեցաւ եղծանել զԳիրս Սուրբս:

**Տաւնապարճառ Բ ձեռագրախումբ
Ի քրանի Դաւթի մարգարէի և
Յակովբու եղբարն Տեառն**

Ջոր արիւնակ, արքունիս ոք կամիցի կազմել զհիմն հաստատուն առնէ ի վերայ կարծր և անյողղողղ վիմի, զոր Տէրն առա-

¹ ՄՄ ձեռ. 2021, թ. 4ա-12ա, 4139, թ. 1ա-7բ, 5443, թ. 67ա-73ա:
² Համաբարբառ Յայսմաուրք, Դեկտ. 24 (Քաղոց ժէ), հտ. ԺԲ, էջ 300-301:
³ Ստեփանոսի Սիւնեցոյ յաղագս Դաւթի և Յակոբու, Մատենագիրք Հայոց, Ը դար, հտ. Զ, Անթիլիաս, 2007, էջ 517:

մի գուցէ յորձանուտ գետոց կամ կեաց յԱւետարանի անդ. այս է եկեղեցի ի յանձրեաճին ամբոյ հոսանաց վերայ վիմի հաւատոյ՝ մարգարէական և դրուել եպերանս կրելով ի հազա- առաքելական հիմամբ հաստատեալ՝ ան- ըրին յարձակմանէ կործանեալ կեան զլուխ ունելով զՔրիստոս: Իբրև զտունն զայն:

Նույն ճառի համար կարծես թե հղում-աղբյուր է Մակար Երուսաղեմացու թուղթը՝ ուղղված Վրթանես կաթողիկոսին, որտեղ վերջինս քննության է առնում Հայ եկեղեցու արարողակարգը և հորդորում պահել ընդհանրական եկեղեցուն ավանդված վաղեմի կարգը¹: Ահա, Դավթի և Հակոբի տոնի պատճառի հեղինակը վկայակոչում է Մակարի՝ «ի Հայս» ուղղված թուղթը.

Բան վասն տանից գրեաց ի Հայք և Մակար՝ Երուսաղէմի հայրապետն, թէ ի Յակոբայ մինչև ի Յոբնաղ, որ յետ Կիրղի ԽԲ. եպիսկոպոս, այսոքիկ ամենիքեան ի յունարի Զ. տանեցին զԾնունդն Փրկչին:

Ուշագրավ է, որ «Գիրք թղթոց»-ում և «Կանոնագիրք հայոցում» պահպանված Մակար Երուսաղեմացու թղթում խոսվում է միայն մկրտության, հաղորդության և ձեռնադրության կարգի մասին, և խոսք չկա Քրիստոսի ծնունդը հունվարի 6-ին տոնելու շուրջ առաջացած խնդիրների մասին, իսկ վերոբերյալ Երուսաղեմի եպիսկոպոսների անուններն՝ ընդհուպ մինչև Կյուրեղ Երուսաղեմացին, անգամ չեն հիշատակվում: Մի տեղում միայն կարդում ենք.

Արդ՝ միաբանությեամբ ժառանգաւորացս՝ եպիսկոպոսաց և՛ քահանայից և՛ սարկավագաց, ես Մակարիոս արքեպիսկոպոս սուրբ քաղաքիս Երուսաղէմի, աւանդեմ զկանոնադրութիւնս զայս ձեզ՝ ուսեալ յառաքելոցն պատմութեանց. և աւանդութեամբ հարցն առ մեզ հաստատեալ հիմնանայ²:

Հնարավոր է, որ մեր տոնապատճառային միավորի համար աղբյուր է ծառայել ոչ միայն Մակարի թուղթը, այլև Անանիա Շիրակացու «Ի Յայտնութիւն Տեառն և Փրկչին մերոյ» ճառը, որտեղ հեղինակը հիշում է Մակար Երուսաղեմացու թուղթը՝ Ծնունդը, Հայտնությունն ու Մկրտությունը միասին տոնելու Հայ եկեղեցու ավանդույթը Նիկիայի ժողովի կանոններով հաստատագրված լինելու կապակցությամբ.

¹ Տե՛ս Երանելւոյն Մակարայ սրբոյ քաղաքին Երուսաղէմի հայրապետի կանոնական թուղթ ի Հայս, վասն կանոնադրութեան կաթողիկէ եկեղեցւոյ կարգաց, զոր չէ արժան ընդ սահման և հրաման անցանել (այսուհետև՝ Մակար Երուսաղեմացի), Գլուխք Թ, Գիրք թղթոց, Երուսաղեմ, 1994, էջ 1-9:

² **Մակար Երուսաղեմացի**, նշվ. աշխ. էջ 6:

Եւ յայտ է ի թղթոյ երանելոյն Մակարայ հայրապետին Երուսաղէմի, զոր ի Հայաստանեայցս գրեաց աշխարհ յաղագս խրատու սրբոյ մկրտութեանն, քանզի նա մի էր ի սրբոց ՅԺԸ հարանցն, որք ի Նիկիա: Եւ գրեալ է այսպէս ի վեցերորդ գլխի հրամանի խրատտութեանն՝ բայց կարգաւորութիւն մկրտութեան սրբոյ աւագանին եւ փոյթ յաւթարութեանն Գ տանիցն, յորում առաւել եւս փափագեն միգագո փութացուցանել ի մկրտութիւն զընծայեալսն Աստուծոյ, եւ կատարել զարինակ մեծ փրկական խորհրդեանն, որ ի սուրբ եւ յերեւելի ատուրս կատարեցաւ¹:

Այն, որ Անանիա Շիրակացու վերոնշյալ ճառը աղբյուր է դարձել Տոնապարծառի հեղինակների համար հստակ երևում է նաև Բրիտտոսի Ծնունդը Զաքարիայի պապանձումից սկսած հաշվարկելու դրվագից, ինչն իր արտացոլումն է գտել նաև Իգնատիոս Սկլեռնեցու Ղուկասի ավետարանի մեկնություն մեջ²:

**Անանիա Շիրակացի
Ի Յայտնութիւն Տեառն
և Փրկչին մերոյ՞**

Ապա զիա՞րդ ի մէջ երկուց գլխաւոր տանիցն քահանայապետն թողոյր զժողովուրդն, եւ ի տուն երթեալ մերձենայր ի կինն. եւ կամ ի նոյն աւուր տանին: Եւ արդ մի լիցի մեզ հակառակել եւ վիճաբանել ի ճարտարութիւն արուեստիս պանձալով, այդ ճշմարտութեանն հաւանեսցուք եւ աստուածայնոց զրոց. որպէս եւ յայտնի իսկ եղեւ ի տասն թշրին ամսոյ պապանձումն Զաքարիայի. որ է ԻԷ սեպտեմբերի. եւ ի ԻԲ Թշրին ամսոյ մերձաւորութիւն Զաքարիայի, եւ յղութիւն Եղիսաբեթի, եւ թուեալ զատուրս վեց ամսոյն հարեր ութսուն ար, ցուցանէ ի վեշտասան նիսան ամսոյ, որ լինի վեց ապրիլի ըստ Հռովմայեցւոցն ուր եղեն աւետիք սրբոյ կուսին. եւ թո-

**Տանապարծառ Բ ձեռագրախումբ,
Ի Կրանի Դարթի մարգարէի
և Յակովբու եղբարն Տեառն**

Եւ զիա՞րդ մարթ էր արինապահ քահանային յառաջ քան զկատարումն տանիցն ի կինն երթալ ի լեռնակողմն: Յամսարէից և ի վեր ամենայն արու Իսրայէլի յԵրուսաղէմ՝ ըստ հրամանի արինացն. յամարթ առնէ զնոսա և աստուածախաւս աւետարանիչն Ղուկաս. «Իբրև լցան աւուրք պաշտամանցն» (հմմտ. Ղուկ. Ա. 23): Եւ պաշտաման աւուրք են ըստ արինացն ԲԺ., և է այսպէս. Թշրին ամսեան ի մինն նուիրեալ ար սուրբ կոչեսցի, ամիս Է.երորդ՝ յիշատակ փողոց, և շաբաթ շաբաթուց՝ պարապումն ամենայն Իսրայէլի, որ է սեպտեմբեր ԺԷ.: Եւ յԹ. յերեկորեայ ամսոյն սրբեսջիք, ասէ, զան-

¹ Անանիայի Շիրակայնոյ համարողի ասացեալ ի Յայտնութիւն Տեառն և Փրկչին մերոյ, Մատենագիրք Հայոց, Է դար, Դ հտ., Անթիլիաս, 2005, էջ 673:
² Տե՛ս Մեկնութիւն սրբոյ ավետարանին ըստ Ղուկասու արարեալ սրբոյ վարդապետին Իգնատիոսի ի խնդրոյ Տեառն Գրիգորիսի Հայոց կաթողիկոսի, Կ. Պօլիս, 1735, էջ 28:
³ Անանիայի Շիրակայնոյ համարողի..., նշվ. աշխ., էջ 674:

եալ տասնամյակայ աուրս անդրանկած- ձինս ձեր (հմմտ. Ղևտ. ԻԵ. 9-10): Եւ նի, կատարի երկերիւր եւթանասուն եւ ի Ժ: նորին ամսոյն՝ միշտ քաու- վեց ար ի քսան եւ մի տեբեթ ամսոյ, որ թին՝ յիշատակ քաւելոյ նոցա յոր- է վեց յունուարի ըստ հռովմայեցոց: թագործութենէն:

Տոնապատճառային հաջորդ միավորը «Պատճառ քանի նախավկային Սրեփանոսի»¹ պատճառ-մեկնությունն է, որի աղբյուրների ճշտման գործում մեծ դեր է խաղում այն հանգամանքը, որ մի շարք Տոնապատճառ ժողովածու- ներում հստակ նշվում են եկեղեցու այն հայրերի անունները, որոնց երկերից քաղվածքներ են արվել տվյալ ճառը գրելիս: Այսպես, ՄՄ ձեռ. 2040-ում Ստե- փանոս նախավկային վերաբերող միավորն ունի հետևյալ վերտառություն-տե- ղեկանքը. «... Սրբոց հայրապետացն Յոհաննու Ոսկեբերանի և Աթանասի և Պրոկղի, Նեքտառի ասացեալ բան գովեստի ի սուրբ Նախավկայն Քրիստոսի և յառաջին Սարկավագ Ստեփանոս» (թ. 19ա): ՄՄ ձեռ. 1007 ունի հետևյալ վեր- տառությունը. «Յոհաննու Ոսկեբերանի, Եփրեմի, Պրոկղի, Նեքտառա, Աթանա- սի ասացեալ սուրբ Նախավկայն Քրիստոսի» (թ. 16բ): Սակայն այս տեղեկան- քով ճառերը առավելապես Ջագեցի-Լաստիվերցի-Կամրջաձորեցի խմբագրու- թյունների, այսինքն՝ Ա ձեռագրախմբի, ձեռագրերում են պատահում:

Ուշագրավ է, որ Հաղպատեցի-Արևելցի-Գանձակեցի խմբագրությունների, այսինքն՝ Բ ձեռագրախմբի, ձեռագրերի տեքստը խիստ տարբերվում է Ա ձե- ռագրախմբի ձեռագրերի տեքստից: Բ ձեռագրախմբի ձեռագրերի տեքստում ավելի հստակ են երևում նշված հեղինակների ճառերի հետ աղբյուրները, ինչն, ըստ էության Սամվել Կամրջաձորեցու վաստակն է, քանի որ հենց նա է, որ իր խմբագրության միավորների խորագրերում մշտապես նշում է, թե որ հեղինակ- ներից է օգտվել տվյալ միավորը կազմելիս: Այսպես, օրինակ, ՄՄ ձեռ. 1007- ում, Ստեփանոսի տոնի պատճառի և Աթանաս Ալեքսանդրացու ս. Ստեփանո- սին նվիրված ներբողի միջև աղբյուրները հստակ են.

**ՄՄ ձեռ. 1007, Տունապատճառ
Յոհաննու Ոսկեբերանի, Եփրեմի,
Պրոկղի, Նեքտառա, Աթանասի
ասացեալ սուրբ
Նախավկայն Քրիստոսի**

**Աթանասի Աղեքսանդրացի
ի սուրբն Սրեփանոս յառաջասարկա-
ւագ եւ նախավկայն Քրիստոսի**

Պայծառ և նորահրաշ է խոր- Պայծառ և նորահրաշ է խորհուրդ
հուրդ տանիս, եղբարք, եւ ըստ ար- տօնիս, ով եղբարք իմ սիրելիք, և ըստ

¹ ՄՄ ձեռ. 2021, թ. 12ա-19ա, 4139, թ. 7բ-13բ, 5443, թ. 73ա-79ա:

փիահրաշ ճառագայթից արեգականն արփիափայլ ճառագայթից արեգական՝
զիմանալի աչս մտաց տեսաղացն, սխրալի աչս տեսողացն և զանմահ և
աստուածային լուսովն պայծառացու- զանանց կենդանութիւն ընձեռեալ
ցանէ, եւ զանմահութիւն պարգեւէ աս- պարգեւէ աստուածասիրաց անձանց,
տուածասէր անձանց՝ հանելով ի գե- հանելով ի գերակայ բարձրությունս
րակա բարձրութիւնս երկնից¹: անիմանալեացն...²:

Ա ձեռագրախմբի ձեռագրերի տեքստին կանդրադառնանք իր տեղում,
այստեղ մեր նպատակն է վեր հանել Բ ձեռագրախմբի ձեռագրերի, այն է՝
Հաղպատեցի-Արևելցի-Գանձակեցի խմբագրությունների տեքստերի աղբյուր-
ները: Անկասկած, այստեղ էլ գործ ունենք վերոբերյալ հայրախոսական երկե-
րից արված ծաղկաքաղ-համադրումների հետ, ինչը երևում է տեքստում հան-
դիպող հետևյալ նախադասությունից. «Եւ նիւթ արուեստխաւսութեան իւրեանց
սուրբքն զայս են եղեալ՝ Աթանաս և Պրոկղ և Հիպոդիտա և Նեքտաօիոս և
Աբբա Եփրեմ և այլք ևս: Մեք համառատ ընդ շաւեղս նոցա գնասցուք զյոլովս
նոցա թողեալ զի մի կրկնաբանութեամբ բեռն լիցուք ձեզ, ելս ի մտի եղեալ
կարճաբանութեամբ աւարտեսցուք ի փառս Աստուծոյ»³: Դրանց հետքերը շատ
շատ ավելի դժվար է գտնել սակայն, մեկ-երկու համեստ փորձ կանենք:

**Եփրեմ Խուրի Ատրի
Ի սուրբն Արեփանոս նախավկայն
Քրիստոսի**

Ընդունելի են վկայքն ամենայն,
և ցանկալի է յիշատակ մարտի նո-
ցա, բայց առաւել համարիմ զվ-
կայիս այսորիկ. Իբրև թէ՛ ամենայն
պտուղք սիրելի են հողագործաց,
բայց առավել ցանկալի վաղահասն
է քան զամենայն: Իսկ եթէ ողկոյզն
անզաւոր ցանկալի է վասն վաղա-
հասութեանն, որչափ ևս առաւել
վկայս այս գեղեցիկ և ընդունելի⁴:

**Տաւնապարձատ Բ ձեռագրախումբ
Սրբոյն Արեփանոսի նախավկային**

Արդ՝ ամենայն պտուղ ցանկալի է ի
գոյնս և ի համս, որք ազնիւք են: Զի
պտուղն է առաջին կերակուր անմեղացն,
և հացն յետոյ մեղաւորաց ի քիրտն երե-
սաց հրամայեցաւ ուտել: Այլ որ վաղա-
հասն է ի պտղոցն, աւելի պատուով ըն-
դունիմք: Այսպէս ամենայն մարտիրոսք
զարմանալիք են մեզ զի ի վեր, քան
զբնութիւն մարմնոյ ցուցին առաքինու-
թիւնս: Այլ Ստեփանոս առաջին և ան-

¹ ՄՄ ձեռ. 1007, թթ. 16բ-17ա:

² Սուրբ Աթանասի Աղեքսանդրիոյ հայրապետի ճառք, թուղթք և ընդդիմասացութիւնք, Վե-
նետիկ, 1899, էջ 500:

³ Տե՛ս 4139, թ. 10ա:

⁴ Սրբոյն Եփրեմի Մատենագրութիւնք, Ճառք և աղօթք, հտ. 4, Վենետիկ, 1836, էջ 143:

դրանիկ ամենեցունց...

Կամ՝

**Եփրեմ՝ Լսուրի Ասորի Ի սուրբն
Սրեփանոս Նախավկայն -Քրիստոսի**

Ի կատաղեալն իւրեանց զքարինս առեալ՝ կամէին քարկոծեալ զՔրիստոս և զի ոչ եղեն ձեռնհաս քարկոծել, պահեցին զոխսն և հանին ի Ստեփանոս. զպակասութիւն չարանացն Քրիստոսի ի նա կատարեցին¹:

**Տաւնապարձառ Բ ձեռագրախումբ,
Սրբոյն Սրեփանոսի Նախավկային**

ԶՔրիստոս կամեցան քարկոծ առնել յարտեան լերին, և զի չէին գրեալ մարգարէքն՝ չկարացին: Զայն սմա արարին, զի քարինքն այն յարինեսցին ի շինուած եկեղեցւոյ և հաւատացելոց աստիճանք յերկինս ելից: Եւ լցցէ զպակասութիւն չարչարանացն Քրիստոսի:

Մեր քննելիք խմբագրութիւններում սուրբ Ստեփանոսի տոնի պատճառի աղբյուրներից է նաև Աթանաս Ալեքսանդրացուն վերագրվող և միայն հայերենով պահպանված Ստեփանոս Նախավկային նվիրված ներբողը, որը, սակայն, խիստ տարբերվում է Աթանասի անունով մեզ հասած ճառի շարադրանքից: Բ ձեռագրախմբի ձեռագրերից մեկը՝ ՄՄ ձեռ. 5862, տեքստին ավելացնում է հատվածներ Ա ձեռագրախմբի տեքստից, որոնք, ինչպես ստորև կտեսնենք, Աթանաս Ալեքսանդրացու ճառից քաղված խմբագրված դրվագներ են:

**Աթանասի Ալեքսանդրացի,
Ի սուրբն Սրեփանոս
յառաջասարկաւագ եւ
Նախավկայն -Քրիստոսի**

«Արք, եղբարք, և հարք, աւսէ, լուարուք ինձ»: Իմաստութեամբ դնէր զնախերգանն և կակղագոյն, ամբոխն ջերմացեալ և ցամամբ բորբոքեալ զհեշտալի բանն իբրև ընդ խորիսխ մեղու խառնեալ զվայրագութիւն գազանաբարուացն

**Տաւնապարձառ Բ ձեռագրախումբ
Սրբոյն Սրեփանոսի Նախավկային**

«Արք եղբարք և հարք, լուարուք. Աստուած փառաց երևեցաւ Աբրահամու, հաւր մերոյ, մինչդեռ ի Միջագետս էր մինչ չև բնակեցուցեալ էր զնա ի Խառան»: Քաղցր դնէ զնախերգան բանիցն՝ ցուցանելով, թէ սէր այսպիսի ունիցիր առ նոսա, որպէս առ հայր և եղբայր, թէպէտ որ նոքա կարի հեռէին յայսպիսի գլծոց:

ՄՄ ձեռ. 5862 շարունակում է Ա ձեռագրախմբի տեքստից. «Դարձեալ իմաստուն և կակղագոյն բանիք խաւսի իբրև գխորիսխ մեղու

¹ Նույն տեղում, էջ 148:

սփոփել¹: *խառնեալ՝ առ ամբոխն ցասմամբ բորբոքեալ զվայրենի գազանութիւն նոցա ամփոփեալ»:*

Նաև՝

Տաւնապարծառ Բ ձեռագրախումբ Սրբոյն Սրեփանոսի Նախավկային ՄՄ ձեռ. 5862 հավելում

Անպարտելի մեծ վրկայն հաւաքէր զբազմութիւն քարանցն՝ որպէս զծաղիկս անուշունս և զցաւը հեշտալի և քաղցր յամարանի, զի զանտեսն վերնոց տեսանէր: Եւ մատուցանէր փոխարէն լեղւոյն և քացախին զմաքուր արին իւր կայլակացեալ: Փոխանակ փշեղէն պսակացն և եղեգանն՝ ի մաքուր գլուխ իւր ընդունէր զարկուածս քարանցն: Եւ փոխանակ թքոյն և ապտակին, զհրաշտակատէս երեսս իւր ընդդէմ քարածիգ քարանցն արին հոսէր ի կողէն վասն տիգախոց վտակին, մանրէին դաստակք ձեռացն և սրունք ոտիցն վասն սևեռման հեղուսեալ բևեռացն խոնարհեր պարանոցն, վասն երկնավոր

Աթանասի Աղեքսանդրացի, Ի սուրբն Սրեփանոս յառաջասարկաւագ եւ նախավկայն -Բրիստոսի

Իսկ մեծն վկայս ... անպարտելին և յաղթողն ամենայնի, համահաւաքէր առ ինքն զբազմութիւն քարանցն՝ որպէս զծաղիկս նուշունս և հոտալի, և քաղցր երևեալ ամենայն եկեղեքն ի վերայ նորա, քանզի տեսանէր խորհրդաբար զանտեսանելին վերին զօրութեանցն և մատուցանէր նմա փոխարէն չարչարանացն. փոխանակ լեղւոյն և քացախոյն՝ զմաքուր արեանն իւրոյ զկայլակսն, և ընդ թքոյն և ապտակոյն՝ զհրատեսիլ (հրաշատեսիլ) երեսս իւր ուղղէր ընդդէմ տարածիգ վիմացն և փոխանակ փշեղէն պսակին և հարուածի եղեգանն՝ յամենամաքուր գլուխ իւր ընդունէր զզարկուածս բազմութեան քարացն. հոսէր և

Տաւնապարծառ Ա ձեռագրախումբ ՄՄ 2819 Սրբոյն Սրեփանոսի Նախավկային

Անպարտելի և մեծ վկայն հաւաքէր զբազմութիւն քարանցն որպէս ծաղիկս անուշունս, իբրև զցաւը հրեշտալի և քաղցր յարմարնի: Զի զանտեսն վերնոց տեսանէր, մատուցանէր փոխարէն լեղւոյն և քացախին զմաքուր արին կայլակացեալ: Փոխանակ փշեղէն պսակացն և եղեգանն, ի մաքուր գլուխ իւր ընդունէր զարկուածս քարանցն: Փոխանակ թքոյն և ապտակին, զհրաշատէս երեսս իւր ընդ դէմ քարածիգ վիմացն արին հոսէր ի կողէն վասն տիգախոց վտակին: Մանր էին դաստակք ձեռացն և սրունք ոտիցն վասն երկնավոր գլխոյն խո-

¹ Սուրբ Աթանասի Աղեքսանդրիոյ հայրապետի ճառք, թուղթք և ընդդիմասացութիւնք, նշվ. աշխ., էջ 506:

զլխոյն հաղորդեալն ի արինն ի կողէն՝ յաղագս նարհելոյ ի խաչին²։
 վերայ խաչին։ կողահոս արեանն և ման-
 րէին, փշրէին դաստակք
 ձեռացն և սրունք ոտիցն՝
 յաղագս սևեռման հեղու-
 սելոյ բևեռացն¹։

Հնարավոր են զուգահեռները նաև Ստեփանոս Սյունեցու Մատթեոսի ավե-
 տարանի մեկնությունից հետ, որից մեզ միայն մասունքներ են հասել։

Սյրեփանոս Սինեցի **Տաւնապարճառ Բ ձեռագրախումբ**
Նշխարք ի մեկնութենէ Մատթեոսի **Սրբոյն Սյրեփանոսի նախավկայի**
ավերարանչի

Իսկ Մովսէս ցանկացաւ տեսանել **Եւ Մովսէս յոյժ խնդրեաց բաղ-**
 զԱստուած, և ոչ էր ժամանակ անժա- **ձանաւք և միայն զյետոյսն ետես։ Եւ**
 մանակին... եւ Եղիայ նախանձեցաւ **Եզեկիէլ՝ զնմանութիւն փառացն Տե-**
 զնախանձ Տեառն և յայրին Քորեբ **առն։ Եւ Մովսէս ի Սինեայ, և ամբով, և**
 ցանկացաւ տեսանել զԱստուած³։ **Եղիա՝ ի Քորէբ և ի Սիբանաւար։**

Հայտնի է, որ Ստեփանոս Սյունեցին Աթանաս Ալեքսանդրացու որոշ ճա-
 ոերի թարգմանիչն է։ «Ներբողեան ի սուրբն Ստեփանոս յառաջասարկավագ և
 նախավկայն Քրիստոսի» ճառը հունարեն բնագրով չի պահպանվել և Աթանա-
 սի անհարազատ գործերից մեկն է։ Հնարավոր է, որ այս անհարազատ գործը
 Ստեփանոս Սյունեցու գրչին է պատկանում։ Այնուամենայնիվ, սա լոկ ենթադ-
 րություն է, որը կարող է հաստատվել կամ հերքվել առանձին ուսումնասիրու-
 թյան արդյունքում։

Ստեփանոս նախավկայի տոնի պատճառում հանդիպող թվերի մեկնություն-
 նը հիմնականում ըստ Փիլոն Եբրայեցու է։ Զուգահեռներ կարելի է անցկացնել
 նաև ժամանակին Անանիա Շիրակացուն վերագրված, սակայն իրականում
 Անանիա Նարեկացու գրչին պատկանող «Սակս բացայայտութեան թուոց» աշ-
 խատությունից որոշ դրվագների հետ։ Այս կարճառոտ երկի հեղինակը, ով էլ որ

¹ Նույն տեղում, էջ 511:
² 1007 ձեռագրում այս հատվածը չկա, քանի որ թերթերն ընկած են, /սչում կա որ մի թերթ
 ընկած է, թ. 25բ/, սակայն վստահ կարող ենք ասել, որ այն եղել է, քանի որ տեքստը հիմ-
 նականում համընկնում է 2819, 2040 և Բ խմբի մյուս ձեռագրերի տեքստի հետ։
³ **Ստեփանոս Սինեցի**, Նշխարք ի մեկնութենէ Մատթեոսի ավետարանչի, Մատենագիրք
 Հայոց, Ը դար, հտ. Զ, էջ 250:

լինի, մի քանի տեղերում հստակ նշում է, որ իր երկի համար աղբյուր են ծառայել Փիլոն Եբրայեցին, ինչպես և Պլատոնն ու Պյութագորասը:

**Անանիա Նարեկացի
Սակա բացայայտութեան թոող**

Իսկ սքանչելի թիւ Է: Երորդիդ յոգնաթիւ ունի խորհուրդ զանազանեալ անխառն տարորոշ թիւ, սեռն եւ անապական բնութիւն, զի ոչ բնակի զոք, եւ ոչ ծնանի յումեքէ ի ներքոյ Ժ: Ինդ, զոր կոչեն մշտնջենակուսի, եւ անմար, միակի ի բնութիւն, զոր ասեն ծնեալ յուղղոյն Արամազդայ:

Նաեւ ի ծնունդս յարմարագոյն է թիւս այս, զի յԷ. աւուր սաղմնառեալ յարգանդի ծնանի որդին: Եւ Է. ամսեայ ծնունդքն բեղմնաւորք լինին եւ առողջք: ՅԷ. ամսեան ընծիւղին ատամունք: Եւ յԷ. ամին փոփոխին եւ ընծայի տեսութիւն մտացն եւ երեւութանան կերպարանք բանից յոգիսն: Վասն որոյ Է. ամեայ հրամայեն առնուլ ի վարժս կրթութեան դպրոցաց¹:

Հարկ է նշել որ վերոբերյալ հատվածը Անանիա Նարեկացին շարադրել է Դավիթ Անհաղթի «Սահմանք իմաստասիրութեան» և Փիլոն Եբրայեցու «Աստուածային արինացն այլաբանութիւն» երկի համապատասխան կտորների համադրությամբ²:

Հաջորդ՝ «Ի փանի Պերրոսի և Պաղոսի»³ վերտառությամբ տոնի պատպատճառի աղբյուրներից մեկը վստահաբար հովհան Ոսկեբերանի Պողոսին և Պետրոսին նվիրված ներբողն է:

**Յովհան Ոսկեբերան
Ի սուրբ առաքեալսն Քրիստոսի
Պերրոս և Պաղոս**

**Տանապարծառ Բ ձեռագրախումբ
Պարծառ փանի Պողոսի
և Պերրոսի**

¹ Աբրահամյան Ա., Անանիա Շիրակացու մատենագրությունը, Եր., 1944, էջ 245:
² Տե՛ս Թամրազյան Հ., Անանիա Նարեկացի. կյանքը և մատենագրությունը, Եր., 1986, էջ 98-99:
³ ՄՄ ձեռ. 2021, թ. 19ա-24ա, 4139, թ. 13բ-18ա, 5443, թ. 79ա-83ա:

Եւ որպէս մարմին ինչ զարաւոր և գեղեցիկ երկուս աչս ունելով, այնպէս ճառագայթեալ ունի զարբոցն այնոցիկ զմարմինս: Չեն այնպէս երկինք պայծառ, յորժամ արեգակն զճառագայթս արձակիցէ, որպէս հռովմայեցոց քաղաքն, որ ունի զայնպիսի զամբարս, որք ընդ ամենայն տիեզերս արձակեն զճառագայթս: Անտի յափշտակի Պաւղոս, անտի՝ Պետրոս:

Աղէ, ածէք զմտաւ և զարհուրեցարուք, թէ որպիսի սքանչելիս տեսանէ Հոռոմ. զՊաւղոս յանկարծակի կանգնեալ ի դրէն իւրմէ հանդերձ Պետրոսիւ և յափշտակեալ ընդ առաջ Տեառն: Զորպիսի ընծայս մատուցանէ Հոռոմ Տեառն և կամ որպիսի պսակս ունի քաղաքն այն և կամ որպիսի զարաւոր ոսկիշարս զգեցաւ և կամ որպիսի աղբիւրս ընկալաւ: Վասն այնորիկ զարմանամ ընդ քաղաքն այն ոչ վասն բազում ոսկւոյն և ոչ վասն սեանցն գեղեցկութեան, և ոչ վասն այլ ինչ երևելեացն, այլ յաղագս սեանցն եկեղեցւոյ՝:

Պողոսին և Պետրոսին նվիրված տոնի պատճառում տեղ է գտել նաև Հուստինոս Վկայի «Առ Անտոնիոս» թղթում ավանդած և Իրենիոսի և Եվսեբիոս Կեսարացու կողմից վերապատմված պատմությունը Սիմեոն մոզի մասին, ով իր հրաշագործություններով մորոլեցնում էր հոմեացիներին՝ նրանց կողմից ընդունվելով որպես աստված, և ում համար Տիբեր գետի վրայի երկու կամուրջների միջև արձանագրություն կար գրված «հոռոմէարէն» լեզվով «Սիմոնի

Զարմացուցիչսն վերին զարացն, զբազմափայլ ճառագայթսն, զամենայն բանականաց ցանկալիսն, զլուսապայծառ արեգակունսն, զի չեն այնպէս երկինք պայծառ Բ. լուսաւորաւք մեծամեծաւք, որպէս Հոռոմ՝ Բ. զամբարաւքն: Զի որպէս մարմին զարաւոր և գեղեցիկ Բ.ս աչս ունիցի, այսպէս և Հոռոմ ունի զմարմինս նոցա: Անտի յափշտակի Պաւղոս, անտի և Պետրոս՝ ընդառաջ Տեառն:

Աղէ ածցուք զմտաւ, զորպիսի՞ ընծայս մատուցանէ քաղաքն այն Աստուծոյ: Որպիսի՞ սքանչելիս տեսանէ Հոռոմ յանկարծակի՝ զՊաւղոս կանգնել ի դրանէ իւրմէ հանդերձ Պետրոսիւ՝ ընդառաջ ելեալ Տեառն: Որպիսի՞ պսակ ունի նա ինքեան պարծանաց, և կամ որպիսի՞ զարաւոր ոսկեղէն շարս զգեցաւ և կամ որպիսի՞ աղբիւր ընկալաւ: Եւ այնպէս զարմանալի է Հոռոմ, ոչ վասն ոսկոյն և ոչ վասն սեանցն գեղեցկութեան, ոչ վասն մեծութեան, այլ յաղագս սեանցն եկեղեցւոյ, ամոլոցն հաւատոյ և պարծանքն Քրիստոսի:

¹ Երանելոյն Յովհաննու Ոսկեբերանի Կոստանդնուպալսի եպիսկոպոսի ասացեալ ի սուրբ առաքեալսն Քրիստոսի Պետրոս և Պաւղոս: Ս. Յովհան Ոսկեբերան, աշխ. Հ. Քյոստյանի, Էջմիածին, 2008, էջ 121-122:

Աստուծոյ սրբոյ»¹: Պատմվում է նաև այս Սիմոնի վախճանի պատմությունը: **Տոնապատճառի հեղինակը վերաշարադրում է այս պատմությունը՝ որպես իր աղբյուր նշելով Եվսեբիոս Կեսարացուն:**

Պողոսի և Պետրոսի տոնի պատճառի մյուս աղբյուրների բացահայտման ուղղությամբ քիչ աշխատանք ենք արել: Ա ձեռագրախմբի, մասնավորապես, Սամուել Կամրջաձորեցու խմբագրությունը պատկանող ՄՄ ձեռ. 1007 ձեռագրում գրված է «Անանիաի վարդապետի ի խորհուրդ կատարման առաքելոյն Պետրոսի» գրվածքը (Թ. 39ա-46բ), որը հրատարակվել է Հ. Քյոսեյանի կողմից²: Սակայն այն իր բովանդակությամբ չի համընկնում Բ խմբագրության ձեռագրերի պատճառի բովանդակության հետ: Անանիա Սանահնեցու անունով պահպանվել է ևս մի ճառ «Ի խաչելութիւն Պետրոսի» վերտառությամբ, որն ավելի համառոտ է, և միայն իր սկսվածքով է համընկնում տոնապատճառային տարբերակի հետ³:

Հակոբի և Հովհաննեսի⁴ պարձառ-մեկնության հեղինակը հայտնում է աղբյուրները մեկին՝ Հովհան Ոսկեբերանին, երբ սկսում է Հովհաննես Ավետարանչի մասին բարեբանել հետևյալ խոսքերով.

Եւ զայս յանձնէ անկարացեալք առնել՝ փոխառումք յաստուածակազմն լեզուոյն զներբողական բանսն Յովհաննու Ոսկեբերանի, զի նա իսկ հոմանուն է սրբոյ աւետարանչիս:

Ապա մեջբերում է Ոսկեբերանի նախերգանից մի ծավալուն հատված, որի միայն սկիզբն ենք տալիս՝ համեմատական աղյուսակով.

Յովհան Ոսկեբերան, Մեկնութիւն Յովհաննու	Տաւնապարձառ, Բ ձեռագրախումբ, Ի քանի Յովհաննու և Յակոբայ որդւոցն Որդումնն
---	---

<p>Ի հանդիսի աստ արտաքին աշխարհականքդ յորժամ բռնաւոր մարդիկ՝ զոք մեծահզօր յաղթական պսակել ուստեք լսիցեն՝ համագունդ խուռն ընթաց առ հա-</p>	<p>Որք արտաքին հանդիսիցն լինին տեսաւոք յորժամ զբռնամարտիկ զոք մեծազար ի սիրելեաց և ի բարեկամաց պսակել տեսանեն և կամ լսեն, հոմագունդ ի վերայ դիմեն մարմնով և ուշիւ հոգւոյն, զի</p>
---	---

¹ Եվսեբիոսի Կեսարացոյ Պատմութիւն եկեղեցոյ յեղեալ յԱսորւոցն ի Հայ, թարգմ. Ա. Ճարեան, Վենետիկ, 1877, էջ 100-101, 104:
² Քյոսեյան Հ., Անանիա վարդապետի ի խորհուրդ կատարման առաքելոյն Պետրոսի, «Էջմիածին», 1984, նոյեմբեր-դեկտեմբեր, հտ. ԺԱ-ԺԲ, էջ 101-109:
³ Տե՛ս Անանիա Սանահնեցի, Աստվածաբանական բնագրեր, Ուսումնասիրություններ, աշխ. Հ. Քյոսեյանի, Էջմիածին, 2000, էջ 179-180:
⁴ ՄՄ ձեռ. 2021, թ. 24ա-29բ, 4139, թ. 18ա-22բ, 5443, թ. 83բ-88ա:

սարակ ամենեքեան ի վերայ դիմեն, զի տեսանել և զննել մեծաքանչ զօրութիւն և զիմաստութիւն ճարտարութեան զամենայն, մարթասցին¹:

ի գործոցն մի՛ վրիպեսցին: Նաև ի յերգս արուեստականաց և ի սեթևեթել և ճախարակեալ բանս փիլիսոփայիցն զամենայն կարևոր զպէտսն թողեալ՝ լռութեամբ միտ զնեն, զի զայն գտանել մարթասցեն:

Ոսկեբերանի մեկնությունից զատ տեքստային զուգահեռներ կարելի է անցկացնել նաև Տեր Իսրայելի Յայամնավորքի նույնանուն միավորի հետ:

Հայամնուրք Տեր Իսրայելի, Յովհաննու և Յակովբայ, որդւոցն Որոպման

Տանապարձառ, Բ ձեռագրախումբ, Ի քանի Յովհաննու և Յակովբայ որդւոցն Որոպման

Զի սա միայն է, որ Գ. մայր ունի՝ մի Սողոմէ և մի զՈրոտումն, որ անուանեցան որդիք Որոտման, և երրորդ՝ Աստուածածին կոյսն²:

Գեղեցիկք և վայելուչք՝ ընտրեալք յորովայնէ, որ և ըստ մարմնոյն ևս ազգակից Տեառն՝ Քուերորդիք, զի Սողոմէ դուստր է Յովսեփու: Ունին Բ. մայր՝ զորոտումն, և Յովհաննէս Գ. ունի զԱստուածածինն, որ ի Փրկչէն տուա:

Հովհաննեսի կենսագրությանը վերաբերող որոշ դրվագներ վերցված են Կղեմես Ալեքսանդրացու և Եվսեբիոս Կեսարացու երկերից, ինչի մասին վկայում է հենց ինքը հեղինակը. «Զայն ասէ, զոր Եսեբի պատմէ Կղեմենտեայ բանիս»³: Խոսքը Կղեմես Ալեքսանդրացու «Հարուստների փրկության վերաբերյալ» երկի մասին է, որտեղ պատմվում է Յովհաննեսի՝ մի պատանու նկատմամբ ցուցաբերած հոգածություն մասին և թե ինչպես է հետ բերել նրան սխալ ճանապարհից: Եվսեբիոս Կեսարացին անկասկած օգտվել է Կղեմես Ալեքսանդրացու երկերից, իսկ հայ մատենագիրները մեծապես օգտվել են նրա «Եկեղեցական պատմությունից»: Երիտասարդ նորադարձի և Հովհաննեսի պատմությունը մտել է Հովսեփ Կոստանդնուպոլսեցու Յայամնավորք-ի, այստեղից էլ՝ Տնապարձառ ժողովածուների մեջ:

¹ Յոհանու Ոսկեբերանի մեկնություն սրբոյ աւետարանին որ ըստ Յոհաննու, Կ. Պօլիս, 1717, էջ 2:
² Համաբարբառ Յայամնուրք, Դեկտ. 24 (Քաղոց ԺԷ), հտ. ԺԲ, էջ 336:
³ Այս շարականը չկա Վարդան Հաղպատեցու և Վարդան Արևելցու խմբագրության մեր քննած ձեռագրերում (2021 և 4139), սակայն կա Հովհաննես Գանձակեցու խմբագրության ձեռագրերում ՄՄ 5443, 2771, 5197 ձեռագրերում:

«Պարձառ Ծննդեան և Յայրնության ճրագալուցի»¹ միավորի մեկնունությունը թերևս ամենից խճողված և բազմաշերտ ճառերից է խմբագրությունների և աղբյուրների առումով:

Զուգահեռներն ակնհայտ են Սամվել Կամրջաձորեցու «Յաղագս տանից Տերունականաց» ճառաշարի «Յաղագս առաջին աուրն ութարէ» հատվածի հետ: Նկարագրելով ութ օրերի կանոնները՝ հեղինակը Հայտնութեան ճրագալուցի որոշ կանոնների սկսվածքներ ու նաև բովանդակային որոշ գծեր քաղում է Սամվել Կամրջաձորեցու ճառից: Պետք է նշել, սակայն, որ այդ քաղվածքները խմբագրված տարբերակներ են, ինչպես օրինակ.

Երկրորդ աուրն կանոն ի մատրանն կատարի և յիշատակ սրբոյն Ստեփանոսի, զի այս, որ Բ. աուրս ծնաւ և յարեաւ, Նա յիշուի, զի վկայ լիցի Ծննդեանն և Յարութեանն և ո՛ր թագաւոր, ա՛նդ զինուոր, ո՛ր քահանայապետ, ա՛նդ սարկաւագ: Եւ որպէս զկնի առաջին Ադամայ Աբել, և Երկրորդ Ադամայ՝ Ստեփանոս վասն աստուածապաշտութեան սպանեալք: Յերկրորդ աուրն արարաւ հաստատութիւն և յԲ.որդ դարուն բացաւ ի պատիժ մեղուցելոցն: ՅԲ. աուրն լսեմք յաղագս Ստեփանոսի՝ բանալ հաստատութեանդ յողորմութիւն և ի հրաւէր առաքինեաց, զի գիտասցուք, եթէ չարչարանք վասն Աստուծոյ բանայ զերկինս:

Որոշ ձեռագրեր ունեն հավելումներ: ՄՄ ձեռ. 5862 ավելացնում է Կինտիանոսի Կիրղիանու եպիսկոպոսի կանոնը (?), որի հեղինակի ով լինելը դեռ չենք պարզել, Հիպոլիտոսի կանոնը, Անանիա Շիրակացու կանոնը: 5862 ձեռագիրն ավելացնում է Անդրեասի երրորդ կանոնն ամբողջությամբ²: Ինչպես հոգվածի սկզբում նշվեց, Բ ձեռագրախմբի մեր քննած բոլոր ձեռագրերն ունեն Եփրեմ Խուրի Ասորու անունով մեզ հասած «Տերունական շարականի» հայատառ ասորերեն տեքստն ու դրա հայերեն թարգմանությունը: Ն. Մառը, հայտնաբերելով այս արգիզմը Վենետիկի մատենադարանի Տոնապարձառներից մեկում, մանրամասն քննության է առել այն և հրատարակել՝ ուղղելով, շտկելով և տալով ասորատառ տեքստը՝ ուղագրավ ծանոթագրություններով հանդերձ³:

5862 ձեռագրի հավելումների շարքում գտնում ենք «Գիր տղայութեան Քրիստոսի» պարականոն ավետարանից ծաղկաքաղեր, որոնք ներկայացնում ենք ստորև:

Գիր տղայութեան Քրիստոսի

**Տանապարձառ,
Բ ձեռագրախումբ, Պարձառ**

¹ ՄՄ ձեռ. 2021, թ. 29բ-38ա, 4139, թ. 23ա-30ա, 5443, թ. 88ա-122բ:

² Աղայան Է., Ակնարկներ հայոց տոմարների պատմության, Եր., 1986, էջ 145:

³ Марап Н., ук. соч., стр. 23-25.

Յայրնության ճրագայտյցին

Եւ էին թագաւորք մոգուցն երեք եղբարք ի միասին: Առաջին թագաւորն Մելքոն էր Պարսից, երկրորդ թագաւորն Հնդկաց Գասպար էր. երրորդ թագաւորն Արաբացոց Պաղտասար էր... իսկ զօրք հեծելոցն՝ որք ընդ նոսա էին, արք թուով երկոտասան հազար յամենայն իշխանութենէ չորս-չորս հազար, կարգեալ էր... Առաջին թագաւորն ունէր զմուռն և զհալոյս... և զգիրսն՝ զոր գրեալ էր մատամբն Աստուծոյ և կնքեալ¹:

Գ. եղբարք՝ Մելքոն՝ թագաւոր Պարսից, Դասպար՝ թագաւոր Հնդկաց, Բաղտասար՝ թագաւոր արաբացոց: Ունէին զգիրն կնքեալ, որ ետ Աստուած Աղամայ: ԲԺՌ. զաւրաք և նոյնքան իշխանաւք զԹամիս եկին յԵրուսաղէմ, և շարժեցան ապարանքն Հերոդեսի, և մեռան ՀԲ. այր:

Մեկ այլ հատված է.

Գիր սղայութեան Քրիստոսի

Ասէ Գասպար թագաւորն. Յորժամ զկնդրուկն տարայ մատուցի առաջի նորա, տեսի զնա մարմնով որդի Աստուծոյ բազմեալ յաթոռ փառաց և զօրք անմարմինք սպասաւորէին նմա: Ասէ Պաղտասար. Եւ մտանելն իմոյ՝ տեսի զնա նըստեալ ի բարձրութեան գահոյից և զօրք բազմութեան առաջի նորա՝ որք անկեալ երկիր պագանէին նմա: Ասէ Մելքոն. Ես մարմնով տեսի զնա չարչարանս մեռեալ, դարձեալ յարուցեալ իսկ և կենդանի²:

Տանապարձառ, Բ ձեռագրայտումք Պարձառ Յայրնության ճրագայտյցին

Եւ յորժամ մտին ի յայրն, զայս նշան տեսին. Դասպար թագաւոր զՆա մարմնով Որդի Աստուծոյ ետես՝ նստեալ յաթոռ փառաց և զաւրք անմարմինք սպասաւորէին նմա: Բաղտասար թագաւոր զՆա մարմնով Որդի մարդոյ ետես, որդի արքայ՝ նստեալ ի վերայ բարձրութեան գահոյից և զաւրաք բազումք առաջի Նորա անկանէին և երկրպագէին նմա: Մելքոն թագաւոր ետես զՆա մարմնով ի չարչարանս մեռեալ և դարձեալ յարուցեալ և կենդանացեալ:

«Պարձառ «Քրիստոս ծնեալ»-ին»³ միավորը Գրիգոր Աստվածաբանի «Քրիստոս ծնեալ» ճառաշարի Ա միավորի, այն է՝ «Ի ծնունդն Քրիստոսի»

¹ Գիր Տղայութեան Քրիստոսի, Թանգարան Հայկական Հին և Նոր դպրութեանց, հտ. Բ, Անկանոն Գիրք նոր կտակարանաց, Վենետիկ, 1898, էջ 42-43:
² Նույն տեղում, էջ 50:
³ ՄՄ ձեռ. 2021, թ. 38ա-49բ, 4139, թ. 30ա-39ա, 5443, թ. 126բ-134ա:

լուծմունքն է: Այս լուծմունքը, որ Վարդան Հաղպատեցու հեղինակային ստեղծագործությունն է և ներմուծվել է **Տոնապարձատի** իր կազմած խմբագրության մեջ, հանդիպում է մեր քննած գրեթե բոլոր ձեռագրերում: Տվյալ միավորը կարելի է բաժանել երկու մասի՝ պատճառի և լուծմունքի, թեև տեքստում դրանք հատուկ առանձնացված չեն: Պատճառը բավականին ծավալուն է և համընկնում է բոլոր ձեռագրերում, անշուշտ, որոշ տարբերություններով: Ինչ վերաբերում է լուծմունքին, ապա այստեղ տարբերություններն ավելի ակնհայտ են: Թե պատճառը, թե հիմք-լուծմունքը Վարդան Հաղպատեցունն են: Դեռ Ղ. Ալիշանը ենթադրում էր, որ Ներսես Շնորհալիի գրել է Գրիգոր Նազիանզացու «Քրիստոս ծնեալ»-ի «Ի Ծնունդն Քրիստոսի» միավորի մեկնությունը, որը Վարդան Հաղպատեցին հենց իր՝ կաթողիկոսի խնդրանքով խմբագրել և ընդարձակել էր՝ դարձնելով այն ծավալուն լուծմունք: Ըստ Ալիշանի հենց այս լուծմունքն էլ պահպանվել է մեր բազմաթիվ ձեռագրերում առանց հեղինակի վերաբերյալ տեղեկանքի¹: Ն. Ակինյանը, սակայն, կասկածի տակ է առնում Ալիշանի շանի ենթադրությունը, քանի որ վերջինս չի նշում իր աղբյուրները²: Սույն խնդիրն անդրադարձել ենք առանձին հոդվածով, այդ պատճառով այն մանրամասնությամբ այստեղ չենք ներկայացնում: Նշենք միայն, որ **Տոնապարձատ** ժողովածուների Բ ձեռագրախմբի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ Վարդան Հաղպատեցին իսկապես հեղինակել է Գրիգոր Աստվածաբանի «Ի Ծնունդն Քրիստոսի» ճառի մի լուծմունք, որից մի հատված ընդարձակված տոնապատճառային տեսքի է բերվել և զետեղվել իր իսկ կազմած **Տոնապարձատի** մեջ:

«Յաղագս խորանաց» միավորը հավանաբար Վարդան Հաղպատեցու կողմից **Տոնապարձատի** իր խմբագրության մեջ հավելած պատճառ-մեկնություններից է³, որն, անտարակույս, պատկանում է Ներսես Շնորհալի կաթողիկոսի գրչին: Վերը նշեցինք, որ Վարդան Հաղպատեցու **Տոնապարձատի** նոր խմբագրությունը ստեղծվելուց հետո հաստատվել է Ներսես Շնորհալու կողմից: Այս առումով հասկանալի է Շնորհալու մի շարք մեկնությունների ներմուծումը հաղպատեցիական **Տոնապարձատի** կազմի մեջ: Ինչ վերաբերում է «Յաղագս խորանաց»-ի աղբյուրներին, ապա նշենք, որ Շնորհալու հիմնական աղբյուրն է եղել Ստեփանոս Այունեցու «Մեկնություն խորանացն» վերտառությամբ փոքրիկ ճառը:

¹ Ալիշան Ղ., Շնորհալի և պարագայ իւր, Վենետիկ, 1873, էջ 264-265:

² Ակինյան Ն., Վարդան վարդապետ Հաղբատեցի, Մատենագրական հետազոտություններ, հտ. 1, Վիեննա, 1922, էջ 70-71:

³ Հետաքրքրական է, որ այս հատվածը Վարդան Հաղպատեցու խմբագրության ուղ ընդօրինակությունը հարիսացող 2021 ձեռագրում չկա, բայց կա Վարդան Արևելցու խմբագրության ձեռագրում՝ 4139, թ. 40ա-45բ, նաև 5197, թ. 288ա-298բ:

Ստեփանոսի Սինեաց եպիսկոպոսի մեկնությունն խորանացն

Իսկ հինգերորդ խորանն զնոյնս բերէ զխորհուրդ ստուերն պակասի և կարմիրն պայծառանայ, և շուշանն ծաղկի, քանզի խաչն մերձեցաւ և գուշակք յարութեանն հասին յայտնեալ Քրիստոսի արեամբ փրկութիւն հեթանոսաց¹:

Եւ կաքավան առ պոռնիկն Մարիամ և Բախաբն...²

Շնորհալու մեկնությունը աղբյուր է դարձել մի շարք տոնապատճառային միավորների համար, ինչպես օրինակ՝ «Պարձառ և թելադրությունն չորից անկարանացն, թէ որպէս գրեցան...»-ի³, որի աղբյուրներից մեկը Ներսես Կլայեցու Մատթեոսի Ավետարանի մեկնությունն է, ավելի շուտ վերջինիս խմբագրված տարբերակը, քանի որ որոշ տեղիներ հստակ զուգահեռներով կապվում են վերջինիս հետ: Բերենք մի օրինակ միայն.

Պարձառ և թելադրությունն չորից անկարանացն, թէ որպէս գրեցան...

Տանապարձառ, Բ ձեռագրախումբ, Նախերգան յաղագս խորանաց ավերարանի Մարթէոսի

Իսկ Թորդ խորանն զտաճարն նշանակէ, ըստ որում առաւել է զարդարուն երանգաւք, քանզի սեան և կապուտակն նուազեաց և կարմիրն պայծառացաւ, զի մերձ եկն գալուտոն Էմանուիէլի:

Եւ զի աստ ի ներքոյ կամարացն սեան հարստանայ, և կարմիրն նուազէ, քանզի ստուերականք էին և գուշակք ճշմարտութեանս, և կարմիրն, զի սակաւ ինչ կարէին մաքրութիւն առնել ժողովրդեանն անասնոցն մատուցմունքն:

Իսկ ի Ըերորդ խորանն կաքաւ են նշանակ պոռնիկ և աւտարագգի կանանցն՝ Ռահաբու և Թամարայ և Հուլիայ, և զի խառնասէր է կաքան:

Ներսես Շնորհալու Մարթէոսի Ավերարանի մեկնությունն

¹ Ստեփանոսի Սինեաց եպիսկոպոսի մեկնությունն խորանացն, Մատենագիրք Հայոց, Ը դար, հտ. Զ, 559:
² Նույն տեղում, էջ 560:
³ Վարդան Արևելցու խմբագրության մեջ՝ ՄՄ ձեռ. 4139, թ. 45բ-51ա, 5197, թ. 298բ-315ա:

Իբրև լուան աշակերտքն՝ աղաչեցին զնա, թէ՛ «Զթողեալն ի նոցանէ, զոր ասացէր մեզ, զայն դու մեզ գրով աւանդեայ»:

Աղաչեցին այնուհետև աշակերտքն զՅովհաննէս վասն այսորիկ, եթէ զայն ժամանակ՝ որ թողան յառաջին ավետարանչացն Տեառն և ինչ որ գործեցաւ ի նմանէ՝ տալ նոցա գրով¹:

«Ներսէսի մեկնութիւն Մատթեոսի ավետարանին»² միավորի վերտառութիւնն արդեն վկայում է, որ այն Ներսէս Շնորհալու Մատթեոսի Ավետարանի մեկնությունից վերցված հատված է, իսկ ավելի հստակ՝ Քրիստոսի ծննդին և մկրտությունը վերաբերող հատվածներն են, որոնք, ինչպես նշեցինք, ընդգրկվել են **Տոնապարձառ ժողովածուի մեջ** Վարդան Հաղպատեցու կողմից: Վարդան Արևելցին այն ներառել է նաև իր խմբագրության մեջ, մինչդեռ Հովհաննէս Գանձակեցու խմբագրության մեջ այս միավորը չկա:

Հաջորդ՝ **Յովհաննէս Կարապետին**³ նվիրված պատճառ-մեկնությունը հանդիպում է միայն Վարդան Արևելցու խմբագրության մեջ՝ ՄՄ 4139 ձեռագրում: Բ ձեռագրախմբի մեր օգտագործած մյուս ձեռագրերում այն չկա: Հովհաննէս Մկրտչին նվիրված այս ներբողի հեղինակն ինքը Վարդան Արևելցին է, որն այն դրել է **Տոնապարձառի** իր խմբագրության մեջ⁴:

Յաղագս Տարեմորին Վանական վարդապետի ասացեալ⁵: Վանական վարդապետի հեղինակած այս ճառի ծավալուն և թերևս ամենից տարածված տարբերակը հրատարակվել է Լ. Խաչիկյանի կողմից⁶: Մեր ձեռագրերում պահպանված տարբերակը նույնն է, ինչ որ Լ. Խաչիկյանի հրատարակած տեքստն է: Այդ իսկ պատճառով գերադասեցինք սույն հրատարակության մեջ առաջանություն տալ Բ ձեռագրի տարբերակին, որը նույն ճառի համառոտ և որոշակի փոփոխված տարբերակն է:

«Յիշարակ Պետրոսի Հայրապետի և Աբիսողոմայ»⁷: Այս միճավորն իրականում Պետրոս Ալեքսանդրացու և Աբիսողոմ սարկավագի մարտիրոսու-

¹ Մեկնություն Սուրբ Ավետարանին, որ ըստ Մատթեոսի արարեալ ի սրբոյն Ներսիսէ Շնորհալույ մինչ ի համարն 17 հինգերորդ գլխոյն և անտի արարեալ յերանելոյն Յօհաննու Երզնկացւոյ, որ և կոչի Ծործորեցի, Կ. Պօլիս, 1825, էջ 14:

² ՄՄ ձեռ. 2021, թ. 49բ-62ա, 4139, թ. 51ա-62բ:

³ ՄՄ ձեռ. 4139, թ. 62բ-66բ:

⁴ Տե՛ս Ներբողեան Վարդանայ ի Յովհաննէս Մկրտիչ, Վարդան Արևելցի, Ճառք, Ներբողեանք, աշխ. Հ. Քյոսեյանի, Եր., 2000, էջ 299-305:

⁵ ՄՄ ձեռ. 2021, թ. 62ա-68բ, 4139, թ. 66բ-72բ, 2771, թ. 430ա-438բ:

⁶ Տե՛ս **Խաչիկյան Լ.**, Յաղագս Տարեմորին ի Վանական վարդապետէ ասացեալ, Աշխատություններ, հտ. Ա, Եր., 1995, էջ 173-192:

⁷ ՄՄ ձեռ. 4139, թ. 73ա-74բ, 5443, թ. 383ա-384բ:

թյան պատճառն է ներկայացնում, դրա նախապատմությունն ու հանգամանքները: Սույն սրբերի տոնը միասին տոնվում է Յունվարի 11-ին, և հեղինակը փորձում է «սակաուք զուսեալսն յառաջնոցն աւանդութենէ» պարզաբանել «թէ զի՞նչ պատճառի այսք երեք տաւք կարգեալ են զկնի տէրունեանս Յայտնութեան», հավանաբար նկատի ունենալով Հովհաննես Մկրտչի, Տարեմտի և Պետրոս Ալեքսանդրացու ու Աբիսողոմի յիշատակի օրերը: Տոնապատճառային այս միավորը պահպանվել է մեր ուսումնասիրած ձեռագրերից միայն Վարդան Արևելցու և Գանձակեցու խմբագրությունների որոշ ձեռագրերում, ինքնուրույն պատճառ-միավոր է, ոչ մի աղբյուր չունի Պողոսի և Աբիսողոմի հայտնավորքային վարք-վկայաբանությունների հետ: Կարող ենք ենթադրել միայն, որ հնարավոր է այս պատճառը հեղինակել է Վարդան Արևելցին, սակայն ապացույցներ ներկայացնելու համար ավելի մանրակրկիտ ուսումնասիրություն է պահանջվում:

«Յաղագս Առաջաւորաց պահոց»¹ պատճառ-մեկնությունը պահպանվել է համառոտ և ընդարձակ տարբերակներով: Բ ձեռագրախմբի ձեռագրերը պահպանել են համառոտ տարբերակը, մինչդեռ Ա ձեռագրախմբի ձեռագրերում տեղ է գտել ընդարձակը, որոշ ձեռագրերում էլ (օր.՝ 1007, թթ. 108բ-109բ) «Յաղագս Առաջաւորաց պահոց»-ին առանց վերտառություն հաջորդում է Սարգիս վարդապետի «Հարցմունք Գրիգորի Պահլաւունոյ և վեստարխի և պատասխանի Սարգիս վարդապետի և գիտնականի վասն առաջաւորի պահոցին»² կատեխետիկ բնույթի փոքրիկ երկը: «Յաղագս Առաջաւորաց»-ն առաջին անգամ հրատարակել է Հ. Ավգերյանը «ինչ-որ գրչագիր Տոնապատճառից»՝ առանց նշելու ձեռագրի համարը³: Ավելի ուշ բնագիրը լույս է ընծայել նաև Լ. Մելիքսեթ-Բեկը՝ վերագրելով այն Վանական վարդապետին⁴: Այնուամենայնիվ, ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ սույն պատճառի հեղինակը Սամվել Կամրջաձորեցին է⁵:

Մեր քննասծ վերջին՝ «Լսորհուրդ Տեառնընդատաջի», որ հայտնի է նաև «Պարձատ Խորդաց Տեառն, որ ի փերրուարի կարարի» և «Քառասնաւ-

¹ ՄՄ ձեռ. 2021, թ. 68բ- 69բ, 4139, թ. 74բ-76ա, ՄՄ 5862, թ. 43բ-44բ, 5443, թ. 133բ-134բ, E = ՄՄ 2771, թ. 95բ -96բ, 5197, թ. 37բ-40ա:

² Բնագիրը տե՛ս Մատենագիրք Հայոց ԺԱ դար, հտ. ԺԶ, աշխտ. Գ. Մուրադյանի, Եր., 2012, էջ 487-490:

³ Տե՛ս Ավգերյան Հ., Արցիվուրցի առասպելը և Ս. Սարգսի տօնը, «Բազմավեպ», 1899, էջ 547-548:

⁴ Տե՛ս Մելիքսեթ-Բեկ Լ., Հովհաննես Վանական Տավուշեցու անտիպ երկերից (Պատճառ առաջաւորաց պահոց), «Էջմիածին», հտ. Զ, 1956, էջ 41-43:

⁵ См. Оганджаниян А., укр. соч., сс. 200-202.

րեայ գալստեանն Տեառն ի քաճարն»¹ միավորի հիմնական մասը Իգնատիոս Սկեռնեցու Ղուկասի ավետարանի մեկնության խմբագրված, տանապատճառայի ձևին հարմարեցված տարբերակն է: Թերևս Իգնատիոս Սկեռնեցու աղբյուրներից են եղել Սամվել Կամրջաձորեցու «Յաղագս տանից տերունականաց», «Յաղագս քառասուրեայ ի տաճարն ընծայելոյն Քրիստոսի» ճառերը, որտեղ հստակ են հոլմեփ Կոստանդնուպոլսեցու Յայսմաուրքի հետ տեքստային աղբյուրները: Ինչպես երևում է տեքստային խուզարկումներից, Յայսմաուրքի այս խմբագրության որոշ դրվագներ կրում են Արիստոտելի սաղմի ձևավորման վերաբերյալ պատկերացումները: Սամվել Կամրջաձորեցին իր ճառում նույնպես ներկայացնում է սույն պատկերացումները, մինչդեռ հիսուսի թլփատությունը վերաբերող հատվածը փոխառում է Եփրեմ Ասորու «Ի գալուստն Տեառն ի տաճառն քառասուրեայ և ի ծերունին Սիմէօն» ճառից²:

Իգնատիոս Սկեռնեցու մեկնության մեջ արտացոլվել են նախորդ մատենագիրների ձևակերպումները, ինչի մասին վկայում է հենց ինքը, թե «այսոքիկ յայլոց քննողաց ցուցեալ են», որից էլ անցել են Տոնապարձատի Վարդան Հաղպատեցու խմբագրության մեջ:

<p>Սամվել Կամրջաձորեցի, Իգնատիոս Սկեռնեցի Յաղագս քառասուրեայ ի քաճարն ընծայելոյն Քրիստոսի</p>	<p>Իգնատիոս Սկեռնեցի Մեկնութիւն ավետարանին Ղուկասու</p>	<p>Տանապատճառ Բ ձեռագրախումբ, Խորհուրդ Տեառնընդառայի</p>
<p>Այս է պատճառ, վասն զի արուն յորովայնի մարն ի քառասուն արն կենդանանայր, իսկ էգն՝ յովթսուն: Եւ արուն յաջակողմն ըստ լերդի ջերմության յառաջի քառասուն արն կենդանանայ, իսկ էգն ի ձախակողմ փայծաղանն կենդանանայ յովթսուն ար³:</p>	<p>Իսկ արոին զատուրս քառասուն զի^o ասացաւ և իգին կըրկին եղաւ: Այսոքիկ յայլոց քննողաց ցուցեալ են, որք ասեն յաւուրս քառասուն զարուն կենդանանալ իսկ էգն՝ ութսուն¹:</p>	<p>Քանզի ասեն բնական արք, եթէ արուն յաջակողմ մարն լինելով վասն լերդին ջերմութեանն արագ շնչաւորի որպէս միրգ ի ջերմին տեղիս փովթով հասանի: Իսկ էգն, ի ձախ կողմն լինելով վասն փայծղանն ցրտութեան կրկին աւուրց կարաւտի Զից:</p>

¹ ՄՄ ձեռ. 2021, թ. 70ա - 75ա, 4139, թ. 76ա-81ա, 5862, թ. 44բ-49ա, 5443, թ. 134բ-139բ, 2771, թ. 96բ-103ա:
² Սրբոյն Եփրեմի Մատենագրութիւնք, նշվ. աշխ., էջ 35-44:
³ Սամոելի Կամրջաձորեցոյ յաղագս տանից տերունականաց, Մատենագիրք հայոց, Ժ դար, Ժ հտ., Անթիլիաս, 2009, էջ 71:

Իգնատիոս Սևեռնեցու մեկնությունից բացի Տեառնընդառաջի պատճառի հեղինակը որպես իր աղբյուր հիշում է Ստեփանոս Սյունեցուն՝ հավանաբար նկատի ունենալով վերջինիս Ղուկասի ավետարանի մեկնությունը²:

Այնուամենայնիվ, սույն միավորի աղբյուրներից թերևս ամենահետաքրքրականը Գրիգոր Արծրունեաց եպիսկոպոսի անունով պահպանված անվավեր թղթից արված մեջբերումն է: Այս աղբյուրը ցորս պատշաճ ուշադրության չի արժանացել³, թերևս այն պատճառով, որ ուսումնասիրողների կողմից համարվել է անվավեր: Գրիգոր Արծրունի եպիսկոպոսի «Երուսաղեմ է ի Հայս» գրված թղթին այս կամ այն առիթով (հիմնականում Սուրբ Ծնունդը հունվարի 6-ին տոնելու ավանդույթից դեկտեմբերի 25-ին տոնելուն անցնելու հարցը քննելիս) անդրադարձել են Կ. Տեր-Մկրտչյանը⁴, Գ. Զարբհանալյանը⁵, Ն. Մառը⁶, Կ. Կեկելիձեն⁷ և այլք, սակայն բավարարվել են միայն հպանցիկ դիտողություններով:

Թղթում նկարագրվում են հրաշքներն ու բժշկությունները, որոնք տեղի են ունեցել Երուսաղեմում Հուստինիանոս կայսրի թագավորության երեսուներորդ տարում՝ 560-61 թ., Երուսաղեմի Մակարիոս պատրիարքի հաջորդ Հուստոս և Մարկիանոս պատրիարքների ժամանակներում, երբ Տեառնընդառաջի տոնը փորձեցին առաջին անգամ Երուսաղեմում նշել ոչ թե փետրվարի 14-ին, այլ փետրվարի 2-ին:

Նպատակ չունենալով այստեղ քննելու տվյալ աղբյուրի հետ կապված խընդիրները, ասենք, որ Գրիգոր Արծրունի եպիսկոպոսին, ով մասնակցել է 554/5թ. Դվինի ժողովին⁸, այն վերագրվել է միայն 12-րդ դարի սկզբներին: Մինչ այդ այս պատմությունը հիշվում է, որպես երուսաղեմացիքի պատմություն կամ երուսաղեմացիքի թուղթ. դեռ 7-րդ դարում այն վերապատմում է

¹ Մեկնութիւն սրբոյ Աւետարանին որ ըստ Ղուկասու արարեալ Իգնատիոսի վարդապետի, Վենետիկ, 1824, էջ 78:

² Տե՛ս **Ստեփանոս Սյունեցի**, Նշխարք ի մեկնութենէ Ղուկասու Աւետարանի, Մատենագիրք հայոց, Ը դար, Զ հտ., Անթիլիաս, 2007, էջ 257-340:

³ Սույն թղթի համեմատական բնագիրը ծավալուն ուսումնասիրությամբ հանդերձ արդեն պատրաստ է և շուտով լույս կրնձայվի:

⁴ Վկայութիւնք վասն Ծննդեան Քրիստոսի եւ Մկրտութեանն տանել ի միում ատուր ի յունարի վեցն, աշխ. Կ. Տեր-Մկրտչյանի, «Արարատ», 1896, հունտար, էջ 3-4, 49-52:

⁵ Զարպիհանալյան Գր., Հայկական հին դպրութիւն Դ-ԺԳ դդ., 3-րդ տպագր., Վենետիկ, 1897, էջ 780:

⁶ **Март Н.**, Тексты и разыскания по армяно-грузинской филологии, Ефрем Сирин, О днях празднования рождества, кн. 1, СПб., 1900, стр. 21.

⁷ **Кекелидзе К.**, К вопросу о времени празднования Рождества Христова в древней церкви, Труды Киевской Духовной Академии, 1900, стр. 152-153, прим. 1.

⁸ Տե՛ս Գիրք Թղթոց, նշվ. աշխ., էջ 196, 201, 204:

Անանիա Շիրակացին իր «Ժամանակագրության» մեջ¹, ապա 8-րդ դարում՝ Ստեփանոս Սյունեցին՝ Անտիոքի եպիսկոպոսին գրած պատասխան նամակում²: Հատկանշական է, որ այս անվավեր գրվածքը արտացոլվել է Վարդան Հաղպատեցու, ապա նաև Վարդան Արևելցու կազմած *Տոնապարճատի խմբագրություններում*՝ Տեառնըդառաջի խորհուրդը բացատրող միավորում, որպես վավերական և կանոնիկ գրություն՝ ամրապնդելու համար Հայ եկեղեցու տոնակարգի և ավադույթի ճշմարտացիությունն ու վավերականությունը:

**ԱՂԲՅՈՒՐԱԳԻՏԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ «ՏՈՆԱՊԱՏՃԱՌ»
ԺՈՂՈՎԱԾՈՒԻ ՈՐՈՇ ՄԻԱՎՈՐՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

Աննա Օհանջանյան

Բանալի բառեր՝ Տոնապարճառ, Վարդան Հաղպատեցի, հակաճառաբանություն, րոն, մարենագրական, աղբյուրներ, Կիլիկիա, մեկնություն, լուծմունք:

Հոդվածում ներկայացվում են Տոնապատճառ ժողովածուի Վարդան Հաղպատեցու խմբագրության և վերջինիս հիմքի վրա գրված հաջորդ՝ Վարդան Արևելցու և Հովհաննես Գանձակեցու խմբագրությունները և այդ խմբագրությունների որոշ ձեռագրեր: Ի տարբերություն Հաղպատեցու խմբագրությանը նախորդող Զաքարիա Ձագեցու, Արիստակես Լաստիվերցու և Սամվել Կամրջաձորեցու խմբագրությունների, Հաղպատեցու խմբագրությունն աչքի է ընկնում իր հակաճառաբանական ընդգծված բնույթով, ինչը պայմանավորված էր ոչ միայն 12-րդ դարի պատմաքաղաքական իրավիճակով, այլև Վարդան Հաղպատեցու դավանաբանական դիրքորոշմամբ:

Հոդվածում քննվում են Հաղպատեցի-Արևելցի - Գանձակեցի խմբագրությունների տոնապատճառային մի շարք միավորների՝ Հակոբի և Դավթի տոնի (դեկտեմբերի ԻԵ) պատճառից մինչև Տեառնընդառաջի (փետրվարի ԺԴ) պատճառի աղբյուրները, վեր են հանվում աղերսները ընդհանրական հայրախոսական և հայ մատենագրական գրականության հետ:

**ИСТОЧНИКОВЕДЧЕСКИЙ ОБЗОР НЕКОТОРЫХ ЕДИНИЦ
СБОРНИКОВ “ТОНАПАТЧАР”**

Анна Оганджаниян

Ключевые слова: Тонапатчар, Вардан Ахпатецци, полемический, праздник, литературный, источники, Киликия, комментарии, толкование.

¹ Աբրահամյան Ա., Անանիա Շիրակացու մատենագրությունը, Եր., 1944, էջ 394-396:

² Ստեփանոսի Սինեաց եպիսկոպոսի մեծի իմաստասիրի պատասխանի թղթոյն Անտիոքու եպիսկոպոսի, զոր վասն հաւատոյ գրեալ էր, Մատենագիրք Հայոց, Ը դար, հտ. Զ, էջ 549:

Статья отображает редакцию сборников *Тонапатчар* (Комментарии к Лекционариям или Толкования на Праздники), автором которого является Вардан Ахпатечи, а также более поздние редакции, основанные на редакции Вардана Ахпатечи и приписываемые Вардану Аревелци и Ованесу Гандзакеци. В отличие от предыдущих редакций сборников *Тонапатчар*, составленных Захарием Дзагеци, Аристакемом Ластиверци и Самуэлом Камрджадзореци, новая редакция Вардана Ахпатечи имеет более подчеркнутый полемический характер, что связано с историческими и политическими условиями, а также с вероисповедческой позицией Вардана Ахпатечи.

Статья посвящена нескольким единицам в редакциях *Тонапатчара* Вардана Ахпатечи, Вардана Аревелци и Ованеса Гандзакеци, начиная с причин праздников Давида и Иакова (25 декабря) и заканчивая Причиной Сретения Господня (14 февраля). Исследуются источники используемые авторами-редакторами, а также выявляется взаимосвязь с сочинениями отцов Вселенской Церкви и местных богословов и учителей.

ON THE SOURCES OF SEVERAL UNITS IN THE COLLECTIONS “TONAPATCHAR”

Anna Ohanjanyan

Keywords: *Tonapatchar, Vardan of Haghat, polemical writings, feast, literature, sources, Cilicia, commentary, exegesis.*

The article displays the edition of collections *Tonapatchar* (Commentaries on Lectio-naries or The Reasons of Feast days) authored by Vardan of Haghat as well as the later editions based on his edition and attributed to Vardan Areveltsi and Hovhannes of Gandzak. Unlike previous editions of *Tonapatchars* composed by Zakharia Dzagetsi, Aristakes of Lastiver and Samuel of Kamrjadzor, the new edition of Vardan of Haghat proved to have emphasized polemical character fo the collection. This was due to the historical and political conditions of the time as well as to the confessional position and concerns of Vardan of Haghat.

The article focuses on several units in *Tonapatchar* editions of Vardan of Haghat, Vardan Areveltsi and Hovhannes of Gandzak, starting from the reasons of feasts of David and James (25 of December) and ending with the Reason of Candlemas (14 of February). It investigates the sources used by the authors as well as shows the linkage to the Universal Church fathers, also local theologians’ and teachers’ writings.